Հավելված N 9
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 6-ի նիստի N 29
արձանագրային որոշման

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2017

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին:

ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության մշակման նպատակով ստեղծված և համապատասխան ոլորտները ներկայացնող փորձառու մասնագետներից կազմված աշխատանքային խմբի կողմից նախանշվել են ՀՀ Վայոց ձորի համաչափ և շարունակական զարգացման գերակա ուղղությունները:

Հույսով եմ, որ ռազմավարական այս ծրագիրը կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման անհամաչափության նվազեցմանը, բնակիչների բարեկացության մակարդակի բարձրացմանը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը և ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների առաջնահերթ հիմնախնդիրների և մարտահրավերների արդյունավետ լուծմանը:

Ռազմավարական ծրագրի մշակման աշատանքների համակարգման գործում զգալի են եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Եվրոպական Միության փորձագետների դերը:

Ծրագրի մշակման գործընթացում իրենց ակտիվ մասնակցությունն ու աջակցությու�են ցուցաբերել միջազգային և հասարակական կազմակերպություններ, գործարարներ և այլ շահագրգիռ կազմակերպություններ:

ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մարզում ներդրումներ կատարելու և փոխշահավետ համագործակցության առումով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ծրագրի մշակման գործընթացին մասնակցած պետական կառավարման մարմիններին, մարզային հանձնաժողովի անդամներին, պաշտոնատար և շահագրգիռ բոլոր անձանց:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ **2**
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ **3**
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ **5**
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ **6**
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ **7**
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **8**
II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ **8**
III.ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ **10**
3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 10
3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ 11
3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 13
3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 15
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 17
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 19
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 22
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 25
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 28
3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ 30
3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ 32
3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 35
3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 38
IV. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT) **39**
V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ **43**
5.1.ՏԵՍԼԱԿԱՆ 43
5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43
5.3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 45
VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ **46**
VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ **51**
VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ **52**
IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ **53**

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 56

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 2. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության վիճակագրությունը, ըստ սեռի 2011-2015թթ. .. 12
Աղյուսակ 3. ՀՀ, ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի մշտական բնակչության սեռատարիքային կառուցվածքը, 2016թ. տարեսկզբի դրությամբ 13
Աղյուսակ 4. ՀՀ, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի 6 և բարձր տարիքի բնակչության կրթամակարդակը 13
Աղյուսակ 5. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ. 15
Աղյուսակ 6. Վայոց ձորի մարզի ճանապարհատրանսպորտային պատահարները, 2016թ. 16
Աղյուսակ 7. ՀՀ Վայոց ձորի մարզում ճանապարհային ցանցի խտությունը 17
Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները, 2015թ. 21
Աղյուսակ 9. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրներն ըստ մարզերի 2015թ., որպես % ընդհանուր եկամտի նկատմամբ 21
Աղյուսակ 10. Տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակը Վայոց ձորում 2011-2015թթ. 23
Աղյուսակ 11. Զբաղվածության մակարդակը, ըստ գյուղ-քաղաք կտրվածքի և սեռի, 2015թ., (%).. 23
Աղյուսակ 12. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը, 2015թ. 23
Աղյուսակ 13. Գործազրկության տևողությունը, (մարդ) 24
Աղյուսակ 14. Աշխատուժի առաջարկը, 2015թ. դեկտեմբեր 24
Աղյուսակ 15. Վայոց ձորի ՀՆԱ-ն ըստ հանրապետության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռների 25
Աղյուսակ 16. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ) 26
Աղյուսակ 17. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2015թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ) 26
Աղյուսակ 18. Ծառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀ դրամ) 27
Աղյուսակ 19. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ 10 000 բնակչի հաշվով՝ .. 28
Աղյուսակ 20. Դպրոցների և աշակերտների թիվը ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, 2015-16 ուս.տարում 28
Աղյուսակ 21. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016. հունվարի 1-ի դրությամբ, մ² 30
Աղյուսակ 22. Կազմակերպություններում առաջացած թափոնների քանակական տեսակարար ցուցանիշները , 2015թ. 33
Աղյուսակ 23. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքային ծառայողների, համայնքի ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումները 2011-2015թթ. 37
Աղյուսակ 24. Վայոց ձորի մարզի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն 39
Աղյուսակ 25. ՀՀ Վայոց ձորի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ 43
Աղյուսակ 26. Վայոց ձորի մարզի գերակայությունները 46
Աղյուսակ 27. Վայոց ձորի մարզի ռազմավարական ծրագրեր 51
Աղյուսակ 28. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում 54

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության վերարտադրության ցուցանիշները (հազար մարդ)..... 12
Գծապատկեր 2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ..... 15
Գծապատկեր 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը..... 16
Գծապատկեր 4. ՀՀ-ում ըստ մարզերի և Երևան քաղաքի արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությունը..... 18
Գծապատկեր 5. ՀՀ, ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի կոյուղու համակարգի մաշվածությունը..... 18
Գծապատկեր 7. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011 – 2015թթ. 20
Գծապատկեր 8. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009թ. և 2014թ. 20
Գծապատկեր 9. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, ... 20
Գծապատկեր 10. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ..... 21
Գծապատկեր 11. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ արտահայտված երկրի միջինի % հարաբերությամբ, 2011–2015թթ. 22
Գծապատկեր 12. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011–2015թթ. 22
Գծապատկեր 13. Զբաղվածության պետական ծրագրերը Վայոց ձորի մարզում, 2011-2015թթ.... 25
Գծապատկեր 14. Վայոց ձորի մարզի դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, 2011-2015թթ..... 29
Գծապատկեր 15. Աղքատությունը ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզում 2008, 2010 և 2015 թվականներին 30
Գծապատկեր 16. Հեռացված կեղտաջրերը, ըստ մաքրման աստիճանի..... 32
Գծապատկեր 17. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերում մարզպետարանի մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ.հունվարի 01-ի դրությամբ:..... 36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԳԾ	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
ՏԶԳՊ	Տարածքային զարգացման գործողությունների պլան
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹԿՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԶՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ԵՊՏՀ	Երևանի պետական տնտեսագիտական համալսարան
ՓՀԷԿ	Փոքր հիդրոէլեկտրակայան

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ճանաչել է տարածքային զարգացման կարևորությունը և այս ուղղությամբ շարունակական երկխոսություն է վարել ԵՄ-ի հետ՝ 2000թ.-ից սկսած: 2003թ.-ից սկսած՝ տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումն առաջնահերթ են համարվել մի շարք գերակա փաստաթղթերով, օրինակ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 994-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի <<Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 1207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշմամբ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության մշակման համար 2016 թվականի նոյեմբերի 29-ի ՀՀ Վայոց ձորի մարզպետի թիվ 134 կարգադրությամբ ստեղծվեց աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի վերապատրաստման, կարողությունների զարգացման, մեթոդական աջակցության գործում մեծ դերակատարություն է ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և Եվրոմիության փորձագետները:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի երկարաժամկետ ռազմավարական փաստաթուղթ է, որը տրամադրում է երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ մարզում՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Վերլուծությունները կատարվել են ազգային ռազմավարական շրջանակների հետ սերտորեն, մասնակցային եղանակով և ներգրավվել են բոլոր շահագրգիռ կողմերը:

II. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

4. ՀՀ Վայոց ձորի մարզն ունի նպաստավոր աշխարհագրական դիրք՝ կապում է Հայաստանի Հանրապետության մյուս մարզերը Սյունիքի, Արցախի ու Իրանի Իսլամական Հանրապետություն հետ: Զբաղեցնում է հանրապետության տարածքի շուրջ 7.8%-ը, այստեղ է բնակվում ՀՀ բնակչության 1.7%-ը և ամենանոսր բնակեցված մարզն է: ՀՀ Վայոց ձորը գյուղատնտեսական մարզ է՝ բնակչության 65.2%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում: Մարզը ունի մեծ զբոսաշրջային ներուժ՝ պայմանավորված <<Ջերմուկ>> հանքային ջրերի և պատմամշակութային բազմաթիվ կոթողների առկայությամբ: Մարզում է հայտնաբերվել աշխարհի ամենահին կոշիկը և գինու արտադրության համալիրը: Հայտնի է նաև իր գինիներով և խաղողի <<Արենի>> տեսակով: Մարզը հարուստ է նաև արդյունահանման ենթակա հարուստ բնական պաշարներով:

5. ՀՀ Վայոց ձորի քաղաքներն ունեն ընդգծված գյուղատնտեսական մթերքի արտադրության և վերամշակման ուղղություն, բացառությամբ Ջերմուկ քաղաքի, որը առողջարանային կենտրոն է: Մարզի քաղաքային բնակավայրերից միգրացիան ավելի արագ է ընթանում, քան գյուղական բնակավայրերից, որը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում առկա աշխատատեղերով: Ոչ գյուղատնտեսական աշխատատեղերը շարունակում են մնալ կարևոր խնդիր մարզի քաղաքային բնակավայրերում, բացառությամբ՝ Ջերմուկ քաղաքի:

6. Մարզի հանրային ենթակառուցվածքները դեռևս էականորեն զիջում են միջին հանրապետական ցուցանիշներին, մասնավորապես գազամատակարարման,

ճանապարհների մատչելիության, աղբահանության, կեղտաջրերի մաքրման ենթակառուցվածքները:

7. Բնակչության եկամուտների տեսանկյունից մարզը հանրապետության մարզերի միջև գրավում է միջանկյալ դիրք: Անկախ այն փաստից, որ մարզի բնակչությունը համարվում է հանրապետության տնտեսապես ամենաակտիվներից մեկը, սակայն մարզի բնակչության եկամուտները դեռևս մեծապես կախված են տրանսֆերտներից՝ կենսաթոշակներից ու նպաստներից:

8. Մարզի տնտեսության առաջատարներից է գյուղատնտեսության ոլորտը, որը մեկ շնչի հաշվով շուրջ 1.23 անգամ ավել է, քան հանրապետության ցուցանիշը: Բարձր է նաև շինարարության ցուցանիշը, որը կազմում է հանրապետության միջինի 1.17, սակայն տնտեսության մյուս ճյուղերը դեռևս էականորեն հետ են հանրապետության միջինի ցուցանիշներից: Մարզի ներկայիս տնտեսական վիճակը հնարավորություն չի տալիս ապահովելու այնպիսի պայմաններ, որպեսզի մարզի երիտասարդության գերակշիռ մասը մրցունակ կրթություն ստանալուց հետո ետ վերադառնա մարզ: Այս խնդիրն առավել ակնհայտ է առողջապահության ոլորտում, որտեղ աշխատանքային պայմանների վատ վիճակին և ժամանակակից սարքավորումների բացակայությանն ավելանում է նաև նեղ մասնագետների բացակայությունը:

9. Ներկայումս մարզի տնտեսության աճը կարող է պայմանավորված լինել հետևյալ հիմնական գործոններով՝

1) Զբոսաշրջության զարգացում՝ Ջերմուկ քաղաքի զարգացում՝ որպես առողջարանային և հանքային ջրերի շշալցման կենտրոն, պատմամշակութային, էկոտուրիզմ, քարանձավային տուրիզմ, գյուղական տուրիզմ գյուղական բնակավայրերում (մասնավորապես Արենիի շրջակայքում),
2) Գյուղատնտեսության արդիականացում՝ արդյունքում կստեղծվի մրցունակ գյուղատնտեսական մթերքի առաջարկ, որի հիման վրա կզարգանա նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման արդյունաբերությունը:

10. Տեսլական, ռազմավարական նպատակներ և հիմնական գերակայություններ: Հաշվի առնելով մարզի վերաբերյալ վերլուծության արդյունքները, մարզի համար սահմանվեց հետևյալ տեսլականը՝ **ՀՀ Վայոց ձորի մարզը 2025 թվականին կլինի զբոսաշրջային գրավչությամբ հայտնի, մրցակցային արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող համաչափ զարգացած մարզ:**

11. Մարզի համար սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները՝

1) **Մինչև 2025 թվականը՝** ոչ գյուղատնտեսական ոլորտում որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծում, ավել քան 10%-ով,
2) **Մինչև 2025 թվականը՝** ակտիվ կազմակերպությունների աճ՝ 10%-ով,
3) **Մինչև 2025 թվականը՝** միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թվի աճ 10%-ով,
4) **Մինչև 2025 թվականը՝** մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը աճ՝ 10%-ով,
5) **Մինչև 2025 թվականը՝** երիտասարդության երկարաժամկետ գործազրկություն կրճատում 5%-ով,
6) **Մինչև 2025 թվականն՝** աղքատության կրճատում 5%-ով,
7) **Մինչև 2025 թվականը** մարզը կունենա 7 խոշորացված համայնք (2017թ.),
8) **2025թ.-ի դրությամբ՝** բարելավել սահմանամերձ համայնքների ենթակառուցվածքները,
9) Մարզային և համայնքային աշխատողների 30%-ը յուրաքանչյուր տարի կընդգրկվի վերապատրաստման ծրագրերում,
10) Մարզի քաղաքացիական հասարակության մասնակցությունը տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում՝ կաճի 20%ով:

12. Ռազմավարական նպատակների իրականացման համար սահմանվել են մարզի զարգացման ռազմավարական հիմնական գերակայությունները՝

1) Զբոսաշրջության զարգացում՝ (պատմամշակութային տուրիզմ, էկոտուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, քարանձավային տուրիզմ, գյուղական տուրիզմ),
2) Վերամշակող արդյունաբերության զարգացում,
3) Գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրգանիկ գյուղատնտեսական մթերքի արտադրություն:

III.ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մարզկենտրոն՝ ք. Եղեգնաձոր
Քաղաքներ՝
Ջերմուկ
Վայք
Տարածք՝ 2308 կմ²
Բնակչության թիվ՝ 50 800 մարդ
քաղաք՝ 17 700
գյուղ՝ 33 100
Բնակավայրերի թիվ՝ 55
քաղաք՝ 3
գյուղ՝ 52
Համայնքների թիվ՝ 29

13. ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում: Իր մեջ ընդգրկում է Եղեգնաձորի և Վայքի նախկին վարչական շրջանները՝ երեք քաղաքներով և 52 գյուղական բնակավայրերով: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 29 համայնք, որից 3-ը խոշորացված: Մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է: Մարզը ունի 2308 կմ² մակերես: Տարածքով 7-րդն է մարզերի մեջ և զբաղեցնում է ՀՀ տարածքի 7.8%-ը: Հյուսիսից սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի մարզին, հյուսիս-արևելքից՝ ԼՂՀ-ին, հարավ-արևելքից՝ ՀՀ Սյունիքի մարզին, հարավից՝ Նախիջևանի Հանրապետությանը (Ադրբեջան), արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին: Ադրբեջանի հետ սահմանը 87 կմ է: Մարզի կենտրոնով ձգվում է Երևան-Արտաշատ-Եղեգնաձոր–Վայք-Մեղրի–Իրան միջպետական նշանակության մայրուղին:

14. ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքի բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 850 մ (Արենի) մինչև 3522 մ (Վարդենիս լեռ): Կլիման ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն ջերմաստիճանը հարավային շրջաններում հասնում է +41° C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Արևափայլքի տարեկան միջին տևողությունը 2400-2700 ժ է, անարև օրերի թիվը՝ 30-40օր: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ: ՀՀ Վայոց ձորի մարզին բնորոշ են լանդշաֆտի բազմազանությունն ու ռելիեֆի գոտիականությունն և կտրտվածությունը: Բնական լանդշաֆտները կիսաանապատներն ու տափաստաններն են: Գերակշռում են լեռնաշագանակագույն և մարգագետնատափաստանային հողերը:

15. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 82.5%-ը (190314.2 հա), որը կազմում է հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 9.3%-ը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի

մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 48.5% և վարելահողերը 8.4%, որոնք համապատասխանաբար կազմում են հանրապետության արոտավայրերի և վարելահողերի 8.8% և 3.6%-ը: Ոռոգվում է գյուղատնտեսական նշանակության հողերի 3.4 %-ը:

16. ՀՀ Վայոց ձորը գտնվում է մշտական գործող սեյսմիկ գոտում, հաճախակի են ռելիեֆային տատանումները և ստորգետնյա ցնցումները: Մարզում զգալի տարածում ունեն սողանքները և քարաթափումները, որը կազմում է մարզի տարածքի 0.14%-ը և 0.02%-ը:

17. Ամենամեծ գետն Արփան է, որը մարզի տարածքում հոսում է 92 կմ, 2080 կմ ջրահավաք ավազանով: Արփան սկիզբ է առնում Վարդենիսի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3260մ բարձրությունից, թափվում է Արաքս գետը՝ Նախիջևանի տարածքում: Ամենախոշոր վտակը Եղեգիսն է: ՀՀ Վայոց ձորի բոլոր գետերն ու գետակները սրընթաց են, արագահոս, ունեն մեծ անկում ու թեքություն և հարուստ են էներգետիկ պաշարներով: Արփայի ջրերի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով կառուցվել է 48 կմ երկարությամբ Արփա-Սևան ստորգետնյա ջրատար թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից:

18. Մարզի տարածքը հարուստ է հանքային ջրերի, ապակու հումքի (կվարցային ավազ), ներկերի, պիգմենտների, ոսկու, կապարի, կրաքարի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, մարմարի պաշարներով: Շահագործվում են 1 մետաղական և 6 ոչ մետաղական հանքեր: Երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն է տրվել 3 մետաղական և 1 ոչ մետաղական հանքերի համար:

19. ՀՀ Վայոց ձորն ունի բարենպաստ աշխարհագրական դիրք, գտնվում է Հայաստան-Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական նշանակության մայրուղու վրա, ունի օգտակար հանածոների հարուստ պաշար, պատմամշակութային հուշարձաններ: Մարզում առկա են բազմաթիվ քարանձավներ, հայտնաբերվել է աշխարհի ամենահին կոշիկը և գինու արտադրության համալիրը: Մարզում է աճում նաև խաղողի <<Արենի>> էնդեմիկ տեսակը: Մարզի կլիման բարենպաստ է գյուղատնտեսության համար, սակայն վերջին տարիներին գրանցվող վաղ գարնանային ցրտահարությունները, կարկուտները մեծ վնաս են հասցնում մարզի գյուղատնտեսությանը:

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

20. ՀՀ Վայոց ձորի մարզը բնակչության թվով ամենափոքր և ամենանոսր բնակեցված մարզն է՝ մշտական բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 50.8 հազ. մարդ՝ ՀՀ բնակչության 1.7%-ը: 1կմ^2 մակերեսի վրա բնակչության խտությունը կազմել է 22 մարդ, ՀՀ Սյունիքի մարզում՝ 31, իսկ հանրապետության միջին ցուցանիշը կազմել է 101 մարդ: Եղեգնաձորի տարածաշրջանում, որը կազմում է մարզի տարածքի 50.2%-ը ապրում է բնակչության 65.2%-ը, իսկ բնակչության խտությունը 1կմ^2 վրա կազմել է 29 մարդ: Համեմատաբար նոսր է բնակեցված Վայքի տարածաշրջանը՝ մարզի տարածքի 49.8%-ը, այստեղ բնակվում է բնակչության 34.8%-ը և խտությունը 1կմ^2 վրա կազմել է 15 մարդ:

Աղյուսակ 1. Մշտական բնակչության թվաքանակը, տարեսկզբի դրությամբ

	2012		2013		2014		2015		2016	
	Ամբողջ բնակչությունը									
	էսմր. հազ	% ընդամենի ժողովրդի կշիռը	էսմր. հազ	% ընդամենի ժողովրդի կշիռը	էսմր. հազ	% ընդամենի ժողովրդի կշիռը	էսմր. հազ	% ընդամենի ժողովրդի կշիռը	էսմր. հազ	% ընդամենի ժողովրդի կշիռը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	3 021.4	100	3 026.9	100	3 017.1	100	3 010.6	100	2 998.6	100
Վայոց ձոր	**52.4**	**100**	**52.2**	**100**	**51.7**	**100**	**51.4**	**100**	**50.8**	**100**
Սյունիք	141.8	100	141.7	100	141.0	100	140.2	100	139.4	100
Քաղաքային բնակչություն										
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1 912.7	63	1 917.5	63	1 914.1	63	1 912.9	64	1 907.0	64
Վայոց ձոր	**18.5**	**35**	**18.4**	**35**	**18.2**	**35**	**18.1**	**35**	**17.7**	**35**

Սյունիք	95.2	67	95.3	67	94.7	67	94.4	67	94.0	67
Գյուղական բնակչություն										
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1 108.7	37	1 109.4	37	1 103.0	37	1 097.7	36	1 091.6	36
Վայոց ձոր	**33.9**	**65**	**33.8**	**65**	**33.5**	**65**	**33.3**	**65**	**33.1**	**65**
Սյունիք	46.6	33	46.4	33	46.3	33	45.8	33	45.4	33

Աղբյուրը՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2016 http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

21. Մարզի բնակչության գերակշիռ մեծամասնությունը գյուղաբնակ է (65%), քաղաքային բնակչության թվաքանակը կազմում է մարզի բնակչության շուրջ 35%-ը, հանրապետության միջին ցուցանիշը կազմում է 64% քաղաքաբնակ և 36 % գյուղաբնակ, որին շատ մոտ է ՀՀ Սյունիքի մարզը: 2012-2016թթ. ՀՀ Վայոց ձորի բնակչության թվաքանակը նվազել է 3.1%-ով (1600 մարդ)՝ նույն ժամանակահատվածում հանրապետության բնակչությունը նվազել է 0.8%ով (22800 մարդ), իսկ ՀՀ Սյունիքի մարզի բնակչությունը՝ 1.7%ով (2400 մարդ): Քաղաքային բնակչության նվազման տեմպերը ավելի մեծ են, այստեղ բնակչությունը նվազել է ավելի շատ՝ 4.3%-ով (800 մարդ), իսկ գյուղական բնակչությունը նվազել է 2.4%-ով: Բնակչության թվի նվազման գործում մեծ դեր է խաղում միգրացիան: Այսպես, ըստ 2015թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության տվյալների՝ 2012-2015թթ. ՀՀ Վայոց ձորից մեկնել և 2015թ. դրությամբ դեռևս չի վերադարձել 15 և բարձր տարիքի բնակչության 2.7%-ը, իսկ ՀՀ Սյունիքի մարզում՝ 2.4%-ը:

22. Ժողովրդագրական կարևորագույն ցուցանիշ է նաև բնակչության վերարտադրության ցուցանիշները (հազար մարդ).

Գծապատկեր 1. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության վերարտադրության ցուցանիշները (հազար մարդ)



Աղբյուրը՝ Հայաստանի հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով ,2016թ. http://armstat.am/file/article/demog_2016_3.pdf

23. ՀՀ Վայոց ձորում բնական աճը 2011-2015թթ. նվազել է և հազար մարդու հաշվով կազմել է 1.0 պրոմիլ: 2015 թվականին բնական աճի ամենացածր ցուցանիշներն ունեցել են ՀՀ Տավուշի մարզը՝ 0, ՀՀ Վայոց ձորի ու Սյունիքի մարզը՝ 1.0, նշենք որ հանրապետական միջին ցուցանիշը կազմել է 4.6 պրոմիլ:

Աղյուսակ 2. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության վիճակագրությունը, ըստ սեռի 2011-2015թթ.

(%)

	2011		2012		2013		2014		2015	
	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին
Բնակչությունը	50.1	49.9	49.2	50.8	48.9	51.1	48.8	51.2	48.6	51.4
Ծնվածներ	53.9	46.1	54.8	45.2	53.9	46.1	53.3	46.7	48.3	51.7
Մահացածներ	50.9	49.1	50.7	49.3	50.4	49.6	50.8	49.2	51.0	49.0

Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf,http://armstat.am/file/article/poverty_2016a_7.pdf

24. 2011-2014թթ. բարձր է ծնված տղա-աղջիկ հարաբերակցությունը՝ 117 տղա 100 աղջկա հաշվով, կենսաբանորեն ընդունված միջինից (102-107 տղա 100 աղջկա հաշվով), սակայն վիճակը փոխվել է 2015 թվականին՝ ծնվել է 3.4%-ով ավել աղջիկ, քան տղա: 2016 թվականի առաջին կեսին ծնունդներն ըստ սեռերի Վայոց Ձորի մարզում կազմել է 107 տղա, 100 աղջիկ: 2011-2015 թվականներին տղամարդկանց մահացությունը 1.5-2%-ային կետով բարձր է եղել կանանց մահացության ցուցանիշից: Բնակչության բնական աճի, ծնելիության անկման,

արտագաղթի հետևանքով մարզի բնակչության թիվը նվազել է ավելի շատ, քան հանրապետության միջին ցուցանիշն է:

Աղյուսակ 3. ՀՀ, ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի մշտական բնակչության սեռատարիքային կառուցվածքը, 2016թ. տարեսկզբի դրությամբ

(%)

Տարիք	ՀՀ	**Վայոց Ձոր**	Սյունիք
0-15	20.8	**20.0**	19.5
16-62	66.3	**66.9**	67.0
63+	12.9	**13.1**	13.5
ընդամենը	100	**100**	100
կին	52.3	**51.4**	51.1
տղամարդ	47.7	**48.6**	48.9

Աղբյուրը՝ <<Հայաստանի ժողովրդագրական ժողովածու>>, 2016թ. http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf

25. Մարզի մշտական բնակչության թվաքանակում տղամարդիկ կազմում են բնակչության 48.6%-ը (24731), իսկ կանայք՝ 51.4%-ը (26105): ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության ծերացումն ընթանում է նույն տեմպերով ինչ և հանրապետությունում՝ բնակչության կազմում երիտասարդների մասնաբաժինը մոտ է հանրապետության և ՀՀ Սյունիքի մարզի ցուցանիշներին:

Աղյուսակ 4. ՀՀ, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի 6 և բարձր տարիքի բնակչության կրթամակարդակը

(%)

	չունի տարրական կրթություն	տարրական կրթություն	հիմնական	միջնակարգ կրթություն	նախնական և միջնակարգ մասնագիտական	բարձրագույն ու հետբուհական կրթություն
Հանրապետություն	5	8	9	40	18	20
Վայոց ձոր	**5**	**9**	**9**	**46**	**19**	**12**
Սյունիք	5	8	9	42	22	14

Աղբյուրը՝ Մարդահամար 2011 http://armstat.am/file/doc/99483988.pdf

26. Մարզի բնակչության շրջանում միջնակարգ կրթական մակարդակ ունեցողների մասնաբաժինը 6%-ային կետով, նախնական և միջին մասնագիտական կրթություն ունեցողների մասնաբաժինը 1%-ային կետով բարձր է հանրապետության միջին ցուցանիշից, սակայն բարձրագույն կրթություն ունեցողների մասնաբաժինը 8%-ային կետով ցածր է միջին հանրապետական ցուցանիշից:

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

27. ՀՀ Վայոց ձորի մարզում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կա 3 քաղաքային՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ և 52 գյուղական բնակավայր:

28. Եղեգնաձոր քաղաքը ՀՀ Վայոց Ձորի մարզկենտրոնն է, գտնվում է Արփա գետի հովտում, Երևանից 123կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից 1250 մ բարձրության վրա: Համայնքի վարչական տարածքը 2690.8 հա է, որից բնակավայրերի հողերը՝ 444 հա: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմել է 7600 մարդ: Ըստ բնակչության թվի հանրապետության 32-րդ քաղաքն է, այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ 43%-ը: 2011 թվականից մինչև 2015 թվականը բնակչության նվազել է 3.8 % (300 մարդ): Քաղաքը խորհրդային տարիներին ունեցել է զարգացած արդյունաբերական համալիր, որի մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել սարքաշինության, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը: Նախկին գործարանները լուծարվել են՝ գործում է միայն ռելեի գործարանը իր հնարավորությունների 30%–ով: Ներկայումս զարգանում է կահույքի, քարերի և շինանյութերի, գինու տակառների, գինիների և պահածոների արտադրությունը: Ի տարբերություն մարզի այլ քաղաքների, Եղեգնաձորն ունի 1777 հա գյուղատնտեսական նշանակության հող և տնային տնտեսությունների մոտ 50%-ը օգտվել է հողի սեփականաշնորհումից՝ մեկ հողաբաժնի չափը կազմել է 3300 քմ: Եղեգնաձոր քաղաքում առկա է հետխորհրդային արտադրական լքված տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր: Այսպիսի տարածքների ընդհանուր ծավալը հասնում է 1.4 հա-ի՝

քաղաքի ընդհանուր տարածքի 0.05%-ը: Եղեգնաձոր քաղաքի զարգացման խոչընդոտներից է հադիսանում գործազրկությունը: Մարզի պաշտոնապես գրանցված գործազուրկների 15%-ը Եղեգնաձոր քաղաքից է: Եղեգնաձորում զարգանում է գինու և պահածոների արտադրությունը, որը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը:

29. Վայք քաղաքը գտնվում է Արփա գետի հովտում, Երևանից 135 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից 1256 մ բարձրության վրա: Զբաղեցնում է 926.4 հա տարածք, որից բնակավայրերի հողերը՝ 291.5 հա: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմել է 5700 մարդ: Ըստ բնակչության թվի հանրապետության 37-րդ քաղաքն է, այստեղ բնակվում է մարզի քաղաքային բնակչության շուրջ 32.2%-ը: 2011 թվականից մինչև 2015 թվականը բնակչությունը նվազել է 3.4%-ով (200 մարդ): 2016 թվականի հոկտեմբերի 8-ից Վայք համայնքի կենտրոնն է, որի մեջ ընդգրկվել են Վայքի քաղաքային և Ազատեկ, Փոռ, Արին, Զեդեա գյուղական համայնքները: Քաղաքի վարչական տարածքով է անցնում Երևան-Արտաշատ-Եղեգնաձոր–Վայք-Մեղրի–Իրան միջպետական նշանակության ճանապարհը: 1980-ական թվականներին Վայքը ուներ արդյունաբերական կազմակերպություններ, որոնք ներկայումս չեն գործում: Այժմ զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, քարերի արտադրությունը: Զարգանում է սպասարկման ոլորտը: Քաղաքն ունի հարմարավետ հյուրանոցներ, սրճարաններ, ռեստորաններ, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման օբյեկտներ: Մարզի պաշտոնապես գրանցված գործազուրկների 8%-ը Վայք քաղաքից է: Քաղաքի հետարդյունաբերական չօգտագործվող լքված տարածքների ընդհանուր մակերեսը 0.8 հա, որը հիմնականում սեփականաշնորհված է և չի վերահսկվում համայնքի կողմից: Վայք քաղաքի զարգացման խոչընդոտներից է աշխատատեղերի պակասը, տուրիզմի զարգացման ցածր մակարդակը:

30. Ջերմուկը քաղաքը գտնվում է 2080 մետր բարձրությամբ լավային սարավանդի վրա: Զբաղեցնում է 13737.2 հա տարածք, որից բնակավայրերի հողերը՝ 325.6 հա: Քաղաքի բնակչությունը կազմում է 4400 մարդ: Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ: Գտնվում է Երևանից 170 կմ հեռավորության վրա, Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց 24 կմ, իսկ Եղեգնաձորից՝ 50 կմ հեռավորության վրա: 2016 թվականի հոկտեմբերի 8-ից Ջերմուկ համայնքի կենտրոնն է, որի մեջ ընդգրկվել են Ջերմուկի քաղաքային և Գնդեվազ, Կարմրաշեն, Կեչուտ, Հերհեր գյուղական համայնքները: Ըստ բնակչության թվի է հանրապետության 42-րդ քաղաքն է և այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ 24.8%-ը: 2011 թվականից մինչև 2015 թվականը բնակչությունը նվազել է 4.3%ով (200 մարդ): Ջերմուկն իր հանքային ջրերի կազմությամբ և բուժիչ հատկություններով, չափազանց մոտ է չեխական հեղինակավոր Կառլովի Վարի առողջարանային քաղաքին: 1970 թվականից Ջերմուկը համամիութենական նշանակության է ունեցել և տարեկան ընդունել է ավելի քան 20000 զբոսաշրջիկների: Խորհրդային Միության փլուզմամբ պայմանավորված՝ ռուսական և նախկին խորհրդային հանրապետությունների շուկան կորցնելու հետ, Ջերմուկ այցելող զբոսաշրջիկների թիվը կտրուկ նվազեց հասնելով 6000-ի: ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի թիվ 1064-Ն որոշմամբ Ջերմուկը հայտարարվեց <<Զբոսաշրջային կենտրոն>>: 2008-2015թթ. քաղաքի առողջարանային և զբոսաշրջային համալիրը զարգացավ ու գործում է շուրջտարյա: 2016 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում Ջերմուկ այցելող զբոսաշրջիկների թիվը հասել է 8000-ի: Քաղաքի արդյունաբերության հիմնական ճյուղերն են հանքային ջրի շշալցման արդյունաբերությունը և ձկնաբուծությունը: Հետխորհրդային արտադրական լքված տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր Ջերմուկում չկա, քանի որ նախկին գործարանները վերազինվել են ժամանակակից արտադրական հնարավորություններով և գործում են: Զարգանում է նաև սպասարկման ոլորտը՝ Ջերմուկն այսօր հանգստացողներին ու զբոսաշրջիկներին է առաջարկում առողջարանների, հյուրանոցների, ըմպելասրահի, լողավազանների, մարզահրապարակների, հասարակական սննդի օբյեկտների, սրճարանների և ճոպանուղու բարելավված ծառայություններ: Ջերմուկն ունի առողջարանային քաղաքի հարուստ պատմություն և զբոսաշրջության հեռանկարային զարգացման ներուժ: 2006 թվականից Ջերմուկում են անցկացվում շախմատի միջազգային պատանեկան մրցաշարերը:

Ջերմուկի հանքային ջուրը, առողջարանները, ձմեռային տուրիզմի հնարավորությունները մեծ դեր ունեն ինչպես քաղաքի այնպես էլ մարզի զարգացման համար:

3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

31. Մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով, օդանավակայան և երկաթուղային տրանսպորտ չկա: Գլխավոր երթուղին 108.3կմ երկարությամբ՝ մարզի մի ծայրից մյուսը ձգվող միջպետական նշանակության ճանապարհն է, որը ծառայում է ինչպես ներմարզային այնպես էլ տրանզիտային փոխադրումների համար դեպի Սյունիքի մարզ, Արցախ և Իրան:

32. Տրանսպորտի տեսանկյունից տարածքների միջև տարբերությունները գնահատելու համար ավելի պատշաճ տեղեկատվություն հնարավոր է ստանալ բնակչության թվին ու բաշխվածությանը համեմատ ճանապարհների հասանելիության գնահատման միջոցով: ՀՀ Վայոց ձորի մարզը այն մարզերի ցանկում է, որի ճանապարհների մատչելիության բարելավումն ամենաանհրաժեշտն է:

Աղյուսակ 5. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ.

ՀՀ մարզեր	Ներհամայնքային հասանելիություն, րոպե	Միջհամայնքային և ներհամայնքային հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջ և ներհամայնքային հասանելիության միջև, %
Արարատ	20	35	175%
Սյունիք	41	249	607%
Տավուշ	33	101	306%
Վայոց Ձոր	**16**	**110**	**688%**

Նշում. Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության դեպի հարևան համայնքներ կամ Երևան և ըստ բնակչության թվի:

Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ.տարածքային զարգացման ռազմավարություն, էջ 18, (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

33. Միջպետական և մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը անցնում են լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, որի պատճառով երթևեկության տևողությունը էապես ավելանում է:

34. Մարզում ուղևորափոխադրումները կազմակերպվում են մասնավոր ընկերությունների կողմից մրցույթների միջոցով: 20 բնակավայրեր, որտեղ ապրում են բնակչության շուրջ 63.6% ապահովված են մարզկենտրոնի հետ կանոնավոր աշխատող երթուղիներով, իսկ 10 բնակավայրեր (բնակչության 54.4%) կանոնավոր երթուղիներով կապված են մայրաքաղաքի հետ: Մի քանի բնակավայրեր՝ մարզի բնակչության 4.5% չունեն կանոնավոր երթուղիներ:

35. Մարզում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2015թ. կազմել է 144.3 հազ. տոննա, այն վերջին ցուցանիշն է հանրապետության մարզերի հետ համեմատած և 2014թ. նկատմամբ նվազել է 2.3% իսկ տեսակարար կշիռը հանրապետության ծավալում կազմել է 0.2%, նույն ժամանակաշրջանում բեռնաշրջանառության ծավալը մարզում կազմել է 17.3 մլն տոննա-կմ, որը աճել է 2014թ նկատմամբ՝ 19%-ով:

Գծապատկեր 2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

36. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2015թ մարզում կազմել է 261.1 հազ.մարդ, որը կազմում է հանրապետական ցուցանիշի 0.14%: Ուղևորափոխադրումների ծավալը մարզում նույնպես վերջին տեղում է համեմատած մյուս մարզերի, որը պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ Վայոց ձորի մարզը ունի ամենափոքր բնակչությունը:

Գծապատկեր 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

37. Ընդհանուր առմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալը համեմատած հարևան մարզերի և հանրապետական միջինի շատ ցածր է՝ կապված բնակչության ցածր թվի հետ:

Աղյուսակ 6. Վայոց ձորի մարզի ճանապարհատրանսպորտային պատահարները, 2016թ.

	Վայոց ձորի մարզ			Հայաստանի Հանրապետություն		
	2016	**2015**	**2016-ը 2015 նկատմամբ, %**	2016	2015	2016-ը 2015 նկատմամբ, %
ՃՏ պատահարներ այդ թվում՝	**77**	**77**	**0**	700	845	82.8
մահվան ելքով	**5**	**11**	**28.5**	175	227	77.1

Աղբյուրը՝ ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տեղեկատվություն

38. Հեռահաղորդակցություն: Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ <<Արմենթել>> ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), <<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ (Վիվա սելլ/ՄՏՍ ապրանքանիշ) և <<ՅՈՒՔՈՄ>> (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 97%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով (օպտիկամանրաթելային և եթերային-շարժական): Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Բջջային օպերատորների ծածկույթի քարտեզը:

Vivacell **Ucom** **Beeline**



39. Մարզում լարային հեռախոսակապ ապահովում է <<Արմենթել>> ՓԲԸ-ն (Beeline ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի 40 բնակավայրերը, որը կազմում է մարզի բնակչության շուրջ 80%: Ընդհանուր ֆիքսված հեռախոսակապի բաժանորդների թիվը՝ 9250, սակայն սարքավորումների թողունակությունը մոտ երկու անգամ ավելի է:

40. Մարզի 32 բնակավայրերում գործում է <<Հայփոստ>> ՓԲԸ-ի մասնաճյուղերը, ապահովելով մարզի բնակավայրերի 58%-ը, որը ապահովում է մարզի բնակչության 100% հասանելիություն:

41. ՀՀ Վայոց ձորի մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ Վայոց ձորի տարածքային բաժնի կողմից՝ 30 թվային կայանների միջոցով, ապահովելով մարզի բնակավայրերի 98% ծածկույթը:

42. Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, մարզային՝ տեղական ծրագրեր չկան: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև <<Հանրային ռադիոն>>, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

43. Մարզում ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 616.4 կմ, գլխավոր երթուղին 108.3կմ երկարությամբ՝ մարզի մի ծայրից մյուսը ձգվող միջպետական նշանակության ճանապարհն է:

44. Ճանապարհներ: ՀՀ Վայոց ձորի մարզն ընդգրկում է 108.3 կմ միջպետական նշանակության, 203.5 կմ հանրապետական նշանակության և 304.6 կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ և 731.1 կմ բնակավայրերի (փողոցներ) ճանապարհներ, որից 181.7 կմ գտնվում են քաղաքային համայնքներում (87.3 կմ ասֆալտապատ են):

Աղյուսակ 7. ՀՀ Վայոց ձորի մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով, (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	108.3	0.047	21.32
Հանրապետական	203.5	0.088	40.06
Մարզային (տեղական)	304.6	0.132	59.96
Ընդհանուր	**616.4**	**0.267**	**121.34**

Աղբյուրը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

45. ՀՀ Վայոց ձորի մարզով են անցնում միջպետական Մ-2 Երևան- Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման և Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհները, որը կազմում է Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 6.2%-ը, նշված ավտոճանապարհներով են իրականացվում ԻԻՀ-ից ներմուծվող և արտահանվող բեռնափոխադրումների զգալի մասը:

46. Միջպետական նշանակության ճանապարհն հիմնականում անցանելի է տարվա բոլոր եղանակներին, իսկ հանրապետական և տեղական նշանակության ճանապարհները, որոնց զգալի մասն անցնում են լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմռանը հաճախակի դժվարանցանելի են դառնում, որի հետևանքով երթևեկության տևողությունը էապես ավելանում է: Վերլուծությունները թույլ են տալիս ենթադրելու, որ Երևանից հարավային ուղղությամբ ճանապարհների տեսակարար կշիռը ՀՀ-ում աստիճանաբար ավելանում է, իսկ կապիտալ նորոգված ճանապարհների տեսակարար կշիռը՝ նվազում: Որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

47. Օդանավակայաններ: ՀՀ Վայոց ձորի մարզում գործող օդանավակայան չկա, հեռանկարային է Ջերմուկի նոր օդանավակայանի կառուցումը:

48. Էներգետիկ ենթակառուցվածքներ: Մարզի տարածքով է անցնում Հայաստան-Իրան գազատարը, սակայն, եթե հանրապետությունում գազամատակարարումը ավարտվել է համայնքների 90%-ում, ապա ՀՀ Վայոց ձորում այն կազմում է 38.6%, որը ընդգրկում է այն բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 42.6%:

49. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 30 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 193 մլն.կվտժ՝ մոտ 69 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում է գտնվում ևս 12 փոքր ՀԷԿ-եր՝ 28586 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 86.5 մլն.կվտժ-ով: Մարզում փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիան կազմում է Հանրապետությունում փոքր ՀԷԿ-երի կողմից արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մոտ 8.6%-ը:

50. Մարզով են անցնում ՀՀ էլեկտրաէներգիայի բաշխման ցանցը ԻԻՀ-ը և Արցախի էլեկտրաէներգիայի բաշխման ցանցերին միացնող գծերը:

51. Արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությամբ ՀՀ Վայոց ձորի մարզի ցուցանիշը ՀՀ-ում յոթերորդն է:

Գծապատկեր 4. ՀՀ-ում ըստ մարզերի և Երևան քաղաքի արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությունը



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն: Հղումը՝ http://armstat.am/file/article/b_f_2016_5.pdf և http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf

52. Կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ: ՀՀ Վայոց Ձորի, ինչպես Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, սակայն ՀՀ Վայոց ձորի մարզում կեղտաջրերի մաքրում իրականացվում է միայն Ջերմուկ քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 8.7%, մնացած բնակավայրերի կոյուղին միացված է հոսող գետերին:

Գծապատկեր 5. ՀՀ, ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի կոյուղու համակարգի մաշվածությունը



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն: Հղումը՝http://armstat.am/am/?nid=82&id=1829

53. ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 3 աղբավայր, որոնք կառավարվում են համայնքների կողմից, վտանգավոր թափոնների կառավարումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից:

Գծապատկեր 6. Կազմակերպություններում առաջացած թափոններ 1 կմ² -ի հաշվով՝ համեմատած ազգային միջինի հետ



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծություն: http://armstat.am/file/article/eco_book_2015_10.pdf

54. Մարզի 8 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի 39.6% բնակչությունը աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: 3 քաղաք (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ) ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 34.7%: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: Մարզում կոշտ թափոնների վերամշակման գործարաններ չկան:

55. Ջրամատակարարում: ՀՀ Վայոց ձորի մարզի բոլոր բնակավայրերը ունեն կայուն ջրամատակարարում: 8 բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից, որոնք սպասարկում են բնակչության 54.8%-ին, իսկ մնացած բնակավայրերում՝ համայնքապետարանների կողմից: Մարզի բնակչության 98.5% ունի 20 և ավելի ժամ ջրամատակարարում: Մարզի ջրամատակարարումն իրականացվում է բնական աղբյուրների կապտաժներից ինքնահոս եղանակներով:

56. ՀՀ Վայոց ձորի մարզում 2016 թվականի ընթացքում սանիտարաքիմիական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 7150 նմուշ, արձանագրվել է 111 շեղում (1.5%): Շեղումներ արձանագրվել են միայն մնացորդային քլոր ցուցանիշով՝ 506 նմուշից, 111-ում (22%): Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով շեղումները արձանագրվել են՝ Մալիշկա, Աղավնաձոր, Ագարակաձոր, Ռինդ, Գլաձոր, Արենի, Արփի, Վերնաշեն, Շատին համայնքներում:

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

57. 2015թ. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն կազմել է շուրջ 5 032 մլրդ ՀՀ դրամ, կամ մեկ շնչի հաշվով շուրջ 1.675 մլն ՀՀ դրամ, ՀՀ Վայոց ձորի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1.125 մլն ՀՀ դրամ, կամ ՀՀ միջինի 68%-ը: 2009թ. ի վեր ՀՀ Վայոց ձորի ՀՆԱ-ն աճել է հանրապետության ՀՆԱ-ից արագ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2015թ. 2009թ. համեմատ աճել է ՀՀ-ում 1.7 անգամ, ՀՀ Վայոց Ձորում՝ 2.85 անգամ, ՀՀ Սյունիքի մարզում 3.37 անգամ, ՀՀ Արարատի մարզում՝ 2.33 անգամ: ՀՀ Վայոց ձորի ՀՆԱ-ն 2009թ. մեկ շնչի հաշվով կազմել է միայն 0.519 մլն ՀՀ դրամ կամ ՀՀ միջինի 53%-ը:

58. Տարածքային անհամաչափությունները Հայաստանում ակնհայտ են, թեև անհամաչափությունը Հայաստանի բոլոր տասը մարզերի և Երևանի միջև չնչին չափով նվազել է 2011-2015թթ. ժամանակահատվածում:

Գծապատկեր 7. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011 – 2015թթ.



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf

Գծապատկեր 8. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009թ. և 2014թ.



Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

59. ՀՀ Վայոց ձորի մարզի ընտանեկան դրամական եկամուտը, մեկ անձի հաշվով, կազմում է ամսական 43 360 ՀՀ դրամ, հանրապետության ցուցանիշը կազմում է 52 377 ՀՀ դրամ: ՀՀ Վայոց ձորի մարզի ընտանեկան եկամուտի մակարդակը, մեկ անձի հաշվով ցածր է հանրապետության միջինից, սակայն 5-րդն է ՀՀ մարզերից:

Գծապատկեր 9. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ,



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf

Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները, 2015թ.

մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ	այդ թվում՝							
	ընդամենը դրամական եկամուտներ	վարձու աշխատանք	ինքնազբաղ վաճառություն	գյուղատնտեսական մթերքի և կենդանի-ների վաճառք	սեփակա-նություն*	պետական թոշակներ և նպաստներ	տրանսֆերտներ	այլ եկամուտ
Արարատ	48 309	24 497	6 976	4 497	0	8 160	3 187	992
Սյունիք	72 061	49 599	4 098	4 022	187	9 523	4 567	65
Վայոց ձոր	**43 360**	**20 990**	**4 319**	**2 251**	**0**	**10 100**	**4 523**	**1 177**
Ընդամենը	52 377	28 800	4 842	2 674	115	9 284	4 698	1 964

**վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ* *http://www.armstat.am/file/article/marz_2016_20.pdf*

Աղյուսակ 9. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրներն ըստ մարզերի 2015թ., որպես % ընդհանուր եկամտի նկատմամբ

	ընդամենը դրամական եկամուտներ %-ով հանրապետության միջինի նկատմամբ	այդ թվում՝							
		ընդամենը դրամական եկամուտներ	վարձու աշխատանք	ինքնազբաղ վաճառություն	գյուղատնտեսական մթերքի և կենդանի-ների վաճառք	սեփակա-նություն*	պետական թոշակներ և նպաստներ	տրանսֆերտներ	այլ եկամուտ
Արարատ	92%	100%	51%	14%	9%	0%	17%	7%	2%
Սյունիք	138%	100%	69%	6%	6%	0%	13%	6%	0%
Վայոց ձոր	**83%**	**100%**	**48%**	**10%**	**5%**	**0%**	**23%**	**10%**	**3%**
Ընդամենը	100%	100%	55%	9%	5%	0%	18%	9%	4%

Հղումը՝ http://www.armstat.am/file/article/marz_2016_20.pdf

60. Մեկ շնչին ընկող եկամուտը 2015թ. կազմել է 43360 ՀՀ դրամ և հանրապետության միջին ցուցանիշի շուրջ 83%-ը և այն հիմնականում բաղկացած է վարձու աշխատողների աշխատավարձից՝ 48%, թոշակներից՝ 23%, ինքնազբաղվածությունից և տրանսֆերտներ 10% հավասարաչափ յուրաքանչյուրը, այլ եկամուտներից 3% և գյուղատնտեսության 5%:

Գծապատկեր 10. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 218: Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf

61. Մարզում աշխատավարձերի մակարդակը մնում է բավականին ցածր, հարակից մարզերի համեմատ այստեղ նա ամենացածրն է և կազմում է 127 964 ՀՀ դրամ 2015թ. դրությամբ:

Գծապատկեր 11. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ արտահայտված երկրի միջինի % հարաբերությամբ, 2011–2015թթ.



Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: Հղում՝ **http://www.armstat.am/file/article/marz_2016_16.pdf**

62. Մարզում պետական հատվածում զբաղված բնակչության աշխատավարձը համեմատական է հարակից մարզերի նույն հատվածի աշխատավարձին, սակայն ոչ պետական հատվածում այս տարբերությունները ավելի զգալի են:

Գծապատկեր 12. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011–2015թթ.



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 98-99: Հղումը՝ http://armstat.am/file/article/sv_12_15a_142.pdf

63. Մարզում միջին աշխատավարձը մնում է հանրապետության միջինից ցածր ինչպես պետական այնպես էլ ոչ պետական ոլորտներում: Միջին աշխատավարձը 2015 թվականին կազմել է համապատասխանաբար 107.7 հազար դրամ և 158.8 հազար դրամ, միջին հանրապետական ցուցանիշները նույն ժամանակաշրջանի համար կազմել են համապատասխանաբար 160.5 հազար դրամ պետական հատվածի և 184.4 հազար դրամ ոչ պետականի համար: Վերոնշյալը բացատրվում է մարզում միջին հանրապետական ցուցանիշից գրեթե կրկնակի ավել նվազագույն աշխատավարձ, կամ դրանից ցածր ստացողներով:

3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

64. Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 2015 թվականին կազմել է 1316 հազ. մարդ, որի 2.01%-ը կամ 26.5 հազար մարդը բնակվում է ՀՀ Վայոց ձորի մարզում: Տնտեսական ակտիվության մակարդակը մարզում կազմել է 75.7%, որը ամենաբարձր ցուցանիշն է հանրապետությունում՝ հանրապետական միջին ցուցանիշը 62.5% է: Նույն ժամանակահատվածում տնտեսական ակտիվության մակարդակը ՀՀ Սյունիքի մարզում եղել է 68.3%, իսկ Երևանում 61.4%: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է ՀՀ Շիրակի մարզում՝ 56.1%: Տնտեսական ակտիվությունը ավելի բարձր է ՀՀ Վայոց ձորի գյուղական բնակավայրերում՝ 79.9%, քան քաղաքներում՝ 69.2%: Տղամարդկանց տնտեսական ակտիվության ցուցանիշը 81.3% է և 9.9%-ային կետով բարձր է կանանց տնտեսական ակտիվության մակարդակից՝ 71.4%:

Աղյուսակ 10. Տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակը Վայոց ձորում 2011-2015թթ.

	2011		2012		2013		2014		2015	
	ՀՀ	Վայոց ձոր	ՀՀ	Վայոց ձոր	ՀՀ	Վայոց ձոր	ՀՀ	Վայոց ձոր	ՀՀ	Վայոց ձոր
Տնտեսական ակտիվության մակարդակը, (%)	63.0	**73.1**	32.7	**73.0**	63.4	**75.6**	63.1	**74.1**	62.5	**75.7**
Զբաղվածության մակարդակը, (%)	51.4	**65.3**	51.9	**66**	53.2	**67.3**	52.0	**64.5**	50.9	**68.0**
Գործազրկության մակարդակը, (%)	18.4	**10.6**	17.3	**8.7**	16.2	**11**	17.2	**13**	18.5	**10.1**

Աղբյուրը՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016թ. http://armstat.am/file/article/15._trud_2016_8.pdf

65. Զբաղվածության մակարդակը մարզում բավականին բարվոք է համեմատած հանրապետության մյուս մարզերի հետ: 2015 թվականին 2011 թվականի նկատմամբ զբաղվածության մակարդակը աճել է 2.7%-ային կետով՝ դառնալով 68%, որը 17.1%-ային կետով գերազանցում է հանրապետության (50.9%) և 10.4%-ային կետով ՀՀ Սյունիքի մարզում (57.6%) գրանցված զբաղվածության մակարդակը: Նույն ժամանակահատվածում Երևանում զբաղվածության մակարդակը կազմել է 42.9%:

Աղյուսակ 11. Զբաղվածության մակարդակը, ըստ գյուղ-քաղաք կտրվածքի և սեռի, 2015թ., (%)

	ընդամենը	տղամարդ	կին	քաղաք	գյուղ
Ընդամենը	*50.9*	*59.8*	*43.8*	*42.6*	*64.7*
Սյունիք	57.6	70.6	45.7	51.3	70.2
Վայոց ձոր	**68.0**	**75.8**	**61.9**	**60.1**	**73.2**

Աղբյուրը՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016թ. http://armstat.am/file/article/9.trud_2016_4.1.pdf

66. Բարձր է տղամարդկանց զբաղվածության մակարդակը 75.8%՝ այն 13.9%-ային կետով գերազանցում է կանանց (61.9%) զբաղվածության մակարդակին: Տարածքային մակարդակով դիտարկելիս պարզ է դառնում, որ զբաղվածությունը 13.1%-ային կետով բարձր է մարզի գյուղական բնակավայրերում (73.2), քան քաղաքներում (60.1%):

Աղյուսակ 12. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը, 2015թ.

	Գյուղատնտեսական	Ոչ գյուղատնտեսական
Ընդամենը	35.3	64.7
Սյունիք	33.6	66.4
Վայոց ձոր	**43.7**	**56.3**

Աղբյուրը՝ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016թ. http://armstat.am/file/article/9.trud_2016_4.1.pdf

67. ՀՀ Վայոց ձորի մարզում զբաղվածությունը հիմնականում ոչ գյուղատնտեսական ոլորտում է՝ 56.3%, որը սակայն ցածր է հանրապետական միջին ցուցանիշից (64.7%) 8.4%-ային կետով: Մարզում հիմնական զբաղվածությունը մշակող արդյունաբերության, առևտրի, սպասարկման, հանրային սննդի, մասամբ նաև պետական կառավարման, կրթության, առողջապահության ոլորտներում է: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունը 43.7% է: ՀՀ Վայոց ձորի մարզում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը 2015 թվականին եղել է 54.5%, որը հանրապետության միջին 47.7% ցուցանիշից 6.8%-ային կետով բարձր է: ՀՀ Սյունիքի մարզում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը 36.2% է եղել՝ հանրապետական միջին ցուցանիշից 11.5%-ային կետով ցածր: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ՀՀ Արմավիրի մարզում՝ 75.4%, իսկ ամենացածր ցուցանիշը Երևանում՝ 16.2%: ՀՀ Վայոց ձորում 2015 թվականին ոչ ֆորմալ զբաղվածությունը գերակշռել է գյուղական բնակավայրերում՝ հիմնականում գյուղատնտեսության ոլորտում և կազմել է 99.8%:

68. Գործազրկության մակարդակը ՀՀ Վայոց Ձորի մարզում 2015 թվականին 2011 թվականի նկատմամբ 0.5%-ային կետով նվազել է և կազմել՝ 10.1%: Այն հանրապետության միջին ցուցանիշից ցածր է 8.4%-ային կետով: Ամենաբարձր ցուցանիշը 2015 թվականին գրանցվել է Երևանում՝ 30.2%, իսկ ամենացածրը ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 4.7%: Ընդ որում

մարզում գործազուրկների մեջ գերակշռում են կանայք, իսկ գյուղ-քաղաք կտրվածքով գործազրկության մակարդակը 4.6%-ային կետով բարձր է քաղաքներում: Ըստ մարզի զբաղվածության տարածքայի կենտրոնների՝ գործազուրկների թվաքանակում մեծ թիվ են կազմում բուժքույրերը, ուսուցիչները, ֆինանսիստները, տնտեսագետները, սպասարկման ոլորտի մասնագետները, մասնագիտություն չունեցողները և այլն: Շարունակում է պահանջարկ չունեցող մասնագիտություններով շրջանավարտների մուտքն աշխատաշուկա:

69. 2015 թվականին գործազուրկների մեջ ըստ կրթական ցենզի միջնակարգ, հիմնական և տարրական կրթություն ունեցողների թիվը կազմել է 67.8%, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 5.2%, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 13.5% և բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները 13.5%: Ըստ տարիքային ցենզի գործազուրկների թվում 16-29 տարեկանները կազմում են 26.9%, 30-34 տարեկանները՝ 16.6%, 35-44 տարեկանները՝ 24.3%, 45-54 տարեկանները 18.7%, 55-ից բարձր տարիքի անձինք՝ 13.5%: Տարեցտարի աճում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվաքանակը՝ գործազուրկների թվաքանակի 77.5%-ը կազմում են աշխատաշուկայում անմրցունակ անձինք:

Աղյուսակ 13. Գործազրկության տևողությունը, (մարդ)

Ցուցանիշներ	2014թ. դրությամբ		2015թ. դրությամբ	
	ՀՀ	**Վայոց ձոր**	ՀՀ	**Վայոց ձոր**
Մինչև 3 ամիս	6251	**168**	7578	**104**
4-6 ամիս	8505	**262**	8098	**157**
7-11 ամիս	12358	**191**	15578	**392**
1-3 տարի	21381	**246**	26222	**235**
3 տարուց ավելի	17379	**190**	19528	**230**
Ընդամենը	65874	**1057**	77004	**1118**

Աղբյուրը՝ ՀՀ Վայոց ձորի զբաղվածության կենտրոններ

70. Գործազրկության տևողության ամենամեծ մասնաբաժինը 43%-ը՝ կազմում է մեկից-երեք և 3 տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողները:

71. 2015 թվականին մարզում աշխատանք են փնտրել 1830 մարդ, միևնույն ժամանակ աշխատանքով ապահովվել են 351 մարդ, որը շուրջ 5.2 անգամ ավելի քիչ է քան աշխատանք փնտրողների թիվը, սակայն համեմատած հանրապետության միջին ցուցանիշի՝ պարզ է դառնում, որ աշխատանքով ապահովվածները 8.8 անգամ ավելի քիչ են, քան աշխատանք փնտրողները, գործազրկության տեսանկյունից մարզը գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում:

72. Երիտասարդների զբաղվածության տեսանկյունից մարզը մոտ է հանրապետության միջին ցուցանիշներին, այսպես աշխատանք փնտրողների 26%-ը և աշխատանքով ապահովվածների 27%-ը կազմում են երիտասարդները, հանրապետությունում այս ցուցանիշը 25% է ինչպես աշխատանք փնտրողների, այնպես էլ ապահովվածների համար:

Աղյուսակ 14. Աշխատուժի առաջարկը, 2015թ. դեկտեմբեր

	Աշխատանք փնտրողներ		*նրանցից՝գործազուրկներ*		Աշխատանքով ապահովացներ, մարդ
	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ	ընդամենը, *մարդ*	*նրանցից՝* երիտասարդներ	
Վայոց ձոր	**1830**	**477**	**1118**	**301**	**351**
Սյունիք	4860	1143	4625	1066	601
Ընդամենը	88 928	21 962	77 004	19 007	10073

Աղբյուր՝ Վերլուծություն հիմնված ԱՎԾ “Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին” զեկույցի վրա, էջ 83 Հղում՝ http://www.armstat.a m/file/article/sv_12_15a_141.pdf

73. Աշխատաշուկայի լարվածությունը մեղմելու նպատակով իրականացվում են զբաղվածության կարգավորմանն ուղղված պետական ծրագրերը: 2011-2015թթ. ՀՀ Վայոց

ձորի մարզում զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվածությունը (ընդամենը, որից կին).

Գծապատկեր 13. Զբաղվածության պետական ծրագրերը Վայոց ձորի մարզում, 2011-2015թթ.

(մարդ)



Աղբյուրը՝ Վայոց ձորի մարզի զբաղվածության տարածքային կենտրոններ

74. 2014-2015թթ.զբաղվածության ծրագրերի մեջ ընդգրկվածության աճը պայմանավորված է <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրի իրականացման հետ:

75. 2015 թվականին մարզում ստեղծվել են 9 նոր կազմակերպություններ՝ 320 նոր աշխատատեղով:

76. ՀՀ Վայոց ձորի մարզում տնտեսական ակտիվության մակարդակը ամենաբարձրն է հանրապետությունում՝ գերազանցելով անգամ մայրաքաղաքին և Սյունիքին, աճել է զբաղվածության մակարդակը, նվազել է գործազրկությունը, ինչը վկայում է մարզում առկա տնտեսական մեծ ներուժի մասին:

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

77. 2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են

1) արդյունաբերություն՝ 1.2 %,
2) գյուղատնտեսություն՝ 2.1 %,
3) շինարարություն՝ 2.2%,
4) մանրածախ առևտուր՝ 0.4 %,
5) ծառայություններ՝ 0.6 %:

Աղյուսակ 15. Վայոց ձորի ՀՆԱ-ն ըստ հանրապետության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռների

	Հանրապետության համապատասխան ճյուղի ՀՆԱ նկատմամբ %	Հանրապետության մեկ շնչի նկատմամբ
Գյուղատնտեսություն	**2.10%**	**1.235**
Արդյունաբերություն	**1.20%**	**0.706**
Շինարարություն	**2.2%**	**1.176**
Մանրածախ առևտուր	**0.40%**	**0.235**
Ծառայություններ	**0.60%**	**0.353**

Հղումը՝ http://armstat.am/file/article/marz_2016_33.pdf

78. Ինչպես երևում է աղյուսակից ՀՀ Վայոց ձորի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով բարձր է հանրապետության միջինից գյուղատնտեսության և շինարարության ճյուղերում (համապատասխանաբար 23.5% և 17.6 %), իսկ արդյունաբերության, մանրածախ առևտրի և ծառայությունների ճյուղերում համապատասխանաբար ցածր են 29.6%, 76% և 65%:

79. Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5%-ը:

Աղյուսակ 16. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ)

							Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ. արտահայտված Հայաստանի միջինի %-ով	
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014
Հայաստանի Հանրապետություն	190 515	167 200	179 096	200 462	222 177	239 356	100	*126*
Սյունիք	272 185	226 726	272 006	331 719	366 756	414 349	143	173
Վայոց ձոր	**231 685**	**216 827**	**229 409**	**266 027**	**294 098**	**317 557**	**122**	**133**
Արարատ	358 817	332 165	306 074	346 441	381 278	393 620	188	164

Աղբյուրը՝ ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

80. Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ և բուսաբուծության (մասնավորապես՝ պտղի և խաղողի): Գյուղատնտեսության ոլորտը ապահովում է ոչ ֆորմալ շուրջ 12000 աշխատատեղ:

81. Մարզում ընդհանուր գրանցված կազմակերպությունների քանակը կազմում է 2321, որոնցից ակտիվ են 1842, որը 10 000 բնակչի հաշվով կազմում է 368: Մարզում գործում են 121 արդյունաբերական կազմակերպություններ, այդ թվում՝ 30 ՓՀԷԿ: Արդյունաբերական կազմակերպությունները հիմնականում կենտրոնացված են քաղաքներում, առավել խոշոր կազմակերպությունները գործում են հանքային ջրերի, գինիների և պահածոների արտադրության ոլորտում:

Աղյուսակ 17. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2015թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ)

								Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված Հայաստանի միջինի %-ով		**Փոփոխությունը 2009 - 2015թթ. ընթացքում (% միավոր ներով)**
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2009	2015	
ՀՀ	230 992	264 121	298 509	328 246	291 290	280 394	295 592	100	128	28
ՍՅՈՒՆԻՔ	769 453	1 147 582	1 276 877	1 403 165	1 168 795	1 051 380	1 172 672	333	397	64
ՎԱՅՈՑ ՁՈՐ	**128 212**	**138 747**	**139 815**	**161 588**	**172 173**	**206 240**	**187 182**	**56**	**63**	**8**
ԱՐԱՐԱՏ	231,977	270,039	281,081	355,742	336,010	331,117	369,909	100	125	25

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: http://armstat.am/am/?nid=82&id=1834

82. Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Եղեգնաձորի և Ջերմուկի տարածաշրջաններում: ՀՀ Վայոց ձորի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը մշակող արդյունաբերությունն ու էլեկտրաէներգիայի արտադրությունն է: Արդյունաբերությունը 2015թ ապահովել է զբաղվածություն 1280 մարդու համար:

83. Զարգանում է հանքարդյունաբերությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 1 մետաղական և 6 ոչ մետաղական հանքերից, ընթացքի մեջ են 2 մետաղական հանքերի շահագործման աշխատանքները:

Աղյուսակ 18. Ծառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀ դրամ)

							Անփոփոխ գներով մատակարարվող ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով (2009թ.) արտահայտված Հայաստանի միջինի %-ով		Փոփոխությունը 2009 - 2014թթ. միջև (% միավորներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
Հայաստանի Հանրապետություն	227 400	242 987	264 828	322 287	338 793	371 494	100	163	63
Սյունիք	47 150	56 367	61 644	82 651	96 262	103 712	21	28	7
Վայոց Ձոր	**49 292**	**62 433**	**63 450**	**83 616**	**125 986**	**129 010**	**22**	**35**	**13**
Արարատ	36 760	40 072	42 638	50 629	64 306	64 983	16	17	1

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն: http://armstat.am/am/?nid=82&id=1834:

84. Ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով 2014 թվականին համեմատած 2009 թվականի հետ ավելացել է 13%-ով:

85. Զբոսաշրջությունը ՀՀ Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: ՀՀ Վայոց ձորի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ է գործել Գլաձորի հռչակավոր համալսարանը (13-րդ դար): ՀՀ Վայոց ձորում են գտնվում հայկական մշակույթի հոյակապ հուշարձաններ Նորավանքը, Գնդեվանքը, Շադիվանքը, Թանահատի, Եղեգիսի, Հերմոնի վանքերը, Սելիմի քարավանատունը, բազմաթիվ խաչքարեր: Մարզն ունի ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ: Այժմ զբոսաշրջության ձևերի մեջ տեղի է ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ գյուղական տուրիզմ, էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավարություն լեռնային տարածքներով, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

86. Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանոցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտներ, 81 տնային հյուրանոցներ, 6 գինու համտեսի սրահներ: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2016 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 8000-ի: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Դրանով է պայմանավորված ՌԴ-ում զբոսաշրջությամբ զբաղվող հայ գործարարների խոշոր ներդրումները Ջերմուկ քաղաքում, մասնավորապես՝ <<Ջերսան>> հյուրանոց ջրաբուժարանի կառուցումը և Ջերմուկ քաղաքի <<Ռեզորդ>> առողջարանի կառուցումը: Ընդհանուր առմամբ Ջերմուկ քաղաքում գործում է 8 առողջարան, 12 հյուրանոցներ և շուրջ 25 հյուրատներ: Ամբողջը միասին կազմում է 2420 մահճակալ/օր:

87. ՀՀ Վայոց Ձորի, Արարատի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության զարգացումը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համակարգում, քանի որ զբոսաշրջիկները Երևանից մինչև Իրանի Իսլամական Հանրապետության սահման հնարավորություն կստանան մեկ երթուղու վրա այցելել Խոր Վիրապ, Նորավանք, Զորաց քարերի աստղադիտարան, Տաթև և այլն: Տարածաշրջանային աճի բևեռ է հանդիսանում Ջերմուկ քաղաքը իր տուրիստական հնարավորություններով:

88. Արտահանում: Անկախ այն փաստից, որ ՀՀ Վայոց ձորի մարզում արտահանումը 2015թ.-ին 2011թ.-ի նկատմամբ աճել է շուրջ 8.7 անգամ, սակայն մեկ շնչի հաշվով արտահանումը կազմում է 53.3 հազ դրամ: Արտահանման ծավալով ՀՀ-ում ամենացածրներից է և կազմում է ազգային միջին շուրջ 22.6%-ը:

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

89. Կրթական համակարգի առաջին աստիճանը նախադպրոցական հաստատություններն են: 2015 թվականին մարզում գործել է 15 նախադպրոցական հաստատություն, որից 6 քաղաքային և 9-ը գյուղական բնակավայրերում: 2015թ. նախադպրոցական հաստատություն է հաճախել 989 երեխա: Մարզի գյուղական համայնքներում փակվել է 3 ՆՈՒՀ, որը պայմանավորված է համայնքների ֆինանսական վիճակով: Ըստ հաշվարկների 3-6 տարեկան բնակչության գրեթե 75%-ը ընդգրկված չէ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Աղյուսակ 19. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ 10 000 բնակչի հաշվով՝

	Նախադպրոցական հաստատությունների քանակը					Հաճախող երեխաների թվաքանակը					Մանկավարժների թվաքանակը				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	2.18	2.26	2.31	2.37	2.39	210.31	229.49	228.40	241.58	241.36	17.77	17.49	18.71	19.35	19.91
Վայոց ձոր	**3.2**	**3.4**	**3.4**	**3.4**	**2.9**	**155**	**180**	**177**	**197**	**191**	**20**	**21**	**21**	**20**	**15**
Սյունիք	3.1	3.8	3.8	4.1	4.2	186	208	204	237	243	18	18	18	20	21

http://armstat.am/file/article/soc_15_1.pdf

90. ՆՈՒՀ-երով ապահովվածության մակարդակը ՀՀ Վայոց ձորի մարզում ունի հստակ արտահայտված նվազման միտումներ՝ 2011-2015թթ. 10000 բնակչի հաշվով այն 3.2-ից դարձել է 2.9, իսկ ՀՀ Սյունիքի մարզում ընդհակառակը աճել է 3.1-ից դառնալով 4.2: Նույն ժամանակահատվածում 10000 բնակչի հաշվով նվազել է նաև մանկավարժների թիվը՝ 20-ից դառնալով 15-ի: Ի տարբերության այս ցուցանիշների նվազման՝ ՆՈՒՀ հաճախող երեխաների թիվը 2011-2015թթ. աճել է 155-ից հասնելով 191 երեխայի: Մարզի նախադպրոցական 10 հաստատություններ ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Կենտրոնական ջեռուցման համակարգ ունի 4 ՆՈՒՀ: Հատկապես գյուղական նախադպրոցական ուսումնական հաստատությունները ունեն փափուկ և կոշտ գույքի, խմբասենյակների և դահլիճների կահավորման կարիք:

91. 2016 թվականի ՀՀ պետական բյուջեի «Նախադպրոցական կրթություն» ծրագրով՝ դպրոցին նախապատրաստման մեկամյա դասընթացներում ընդգրկվել է 165 երեխա:

92. ՀՀ Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այս թիվը 2012-2015թթ. մնացել է անփոփոխ: Դպրոցներից 14-ը հիմնական են, իսկ 31-ը միջնակարգ: 2015-2016 ուս.տարում հաշվառվել է 6373 աշակերտ: 1-ին դասարան են հաճախել 617 երեխա: Մարզի աշակերտների թիվը ունի նվազման միտումներ, 2011թ. աշակերտների թիվը կազմել է 7421 կամ հանրապետության ընդհանուր աշակերտների 1.9%, իսկ 2015թ. արդեն 6373, կամ հանրապետության աշակերտների 1.8%: Հանրակրթական դպրոցում ուսումը սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով անավարտ է թողել 7 աշակերտ: Մարզի բոլոր դպրոցները միացված են համացանցին և ունեն համակարգչային դասարաններ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 101 երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են մարզի 7 դպրոցներում: Մարզի դպրոցներում աշխատում են 958 ուսուցիչներ, որոնցից 83.6%-ը ունեն բարձրագույն մանկավարժական, իսկ 9.7%-ը միջին մասնագիտական կրթություն:

Աղյուսակ 20. Դպրոցների և աշակերտների թիվը ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, 2015-16 ուս.տարում

Դպրոցներ 2015/2016 ուսումնական տարում	**Վայոց ձոր**	Սյունիք	Ընդամենը
Դպրոցների քանակը, ընդամենը	**50**	121	1,438
Դպրոցների քանակը, 10 000 բնակչի հաշվով	**9.7**	8.6	4.80
Աշակերտների թվաքանակը	**6373**	16477	364,398
Աշակերտների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	**1239.9**	1175.2	1,215.23
Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	**127.5**	136.2	253.4
Դասարանների քանակը մեկ դպրոցում	**11.0**	12.5	13.9
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	**11.6**	10.9	18.2
Մանկավարժների թվաքանակը	**958**	2225	38,690

Մանկավարժների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով	**186.4**	158.7	129.03
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	**6.7**	7.4	9.4
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը	**19.2**	18.4	26.9

Աղբյուրը՝ ԱՎԾ-ի տվյալներ, http://armstat.am/file/article/soc_15_2.pdf

93. Մարզում 10000 բնակչի հաշվով դպրոցների քանակը 9.7 է, իսկ ՀՀ Սյունիքի մարզում 8.6: Մեկ ուսուցչի հաշվով աշակերտների թիվը 2015 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում 6.7 է, ՀՀ Սյունիքի մարզում 7.4, իսկ հանրապետական միջին ցուցանիշը կազմել է 9.4 աշակերտ: Ծնելության անկման հետևանքով տարեց տարի աշակերտների թիվը նվազում է, որի հետևանքով հատկապես հեռավոր գյուղական համայնքների դպրոցներում առաջանում է թերկոմպլեկտավորված դասարաններ, ինչը ազդում է կրթության որակի վրա: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար, սակայն վերջին տարիներին սոցիալական պայմանների պատճառով նկատվում է ընդգրկվածության նվազում՝ հատկապես ավագ դպրոցներում:

Գծապատկեր 14. Վայոց ձորի մարզի դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, 2011-2015թթ. %



Աղբյուրը՝ <<ՀՀ սոցիալական վիճակը 2015թ.>> http://armstat.am/file/article/soc_15_2.pdf

94. Մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա, մասնավորապես Հերմոնի և Արինի դպրոցները ունեն վառարանային ջեռուցում: Մարզի դպրոցներից 12-ն ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Շուրջօրյա ջրամատակարարում ունեն բոլոր դպրոցները, սակայն կոյուղի չունի 36 դպրոց: <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում անվճար սնունդ են ստանում մարզի հանրակրթական 47 դպրոցների տարրական դասարանների 2507 աշակերտներ:

95. 2015-2016թթ. ՀՀ Վայոց ձորի մարզում գործել է 1 երաժշտական, 4 արվեստի, 1 գեղարվեստի դպրոցներ և 2 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն:

96. 2017 թվականի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզում գործել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ իրականացվում է նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագիր և 1 ԲՈՒՀ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը: ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1191-Ն որոշմամբ հաստատվել է բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը, որով ՀՀ բուհերում իրականացվում է ընդունելություն:

97. 2015-2016 ուս.տարում մարզի ՄՄՈՒՀ են ընդունվել 81 ուսանող, որից 52-ը կին, սովորողների թիվը կազմել է 228, որից 135 կին: 2015թ. ավարտել են 97 շրջանավարտ, որից 68 կին: 2015-2016 ուս.տարում մանկավարժա-դասախոսական անձնակազմի թվաքանակը կազմել է 31 մարդ, որից 24-ը կին:

98. ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը բացվել է 2007 թվականին: 2015-2016թթ. ԲՈՒՀ է ընդունվել 50 ուսանող: Ուսանողների ընդհանուր քանակը 200 է, որից 129 կին: 2015-2016 ուս.տարում պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի թվաքանակը կազմել է 28 մարդ, որից 15-ը կին:

99. Ըստ կատարված ուսումնասիրությունների 2011-2015թթ. ընթացքում ԲՈՒՀ-ի մասնաճյուղն ավարտած շրջանավարտների 95%-ը մնացել է մարզում և մոտ 70%-ը աշխատում են ՀՀ Վայոց ձորի պետական և մասնավոր կազմակերպություններում: Արտագաղթել է շրջանավարտների 5%-ը (աղբյուրը ԲՈՒՀ-ի մասնաճյուղ):

100. Մարզում Հայաստանի ամերիկյան համալսարանի շարունակական կրթության բաժնի կողմից իրականացվում են վերապատրաստման դասընթացներ: Ավագ դպրոցի և ավելի բարձր տարիքային խմբի անձանց համար 2014թ.-ից կազմակերպվել է անգլերենի ուսուցում, իսկ 2016 թվականից «Ստրատեգիական Բիզնես կառավարում» դասընթացը:

101. Կրթության ոլորտի հիմնախնդիրներն են գյուղական համայնքներում ՆՈՒՀ-երի բացակայությունը, դպրոցներում աշակերտների թվի նվազումը, ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության նվազումը: ՀՀ Վայոց ձորի բնակչության համար մեծ նշանակություն ունի ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի առկայությունը, որը ապահովում է մարզում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն:

3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

102. ՀՀ Վայոց ձորի մարզում տնային տնտեսությունների թիվը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 12781: Մարզի տնային տնտեսությունների 38.9%-ը (4978) գտնվում է քաղաքային բնակավայրերում, իսկ 61.1%-ը (7803) գյուղական: Ընտանիքները թիվը 14520 է, որից 36.%-ը (5276) քաղաքային և 63.4%-ը (9244) գյուղական ընտանիքներն են: Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակելի մակերեսով գյուղերում 53.3 քմ է, որը 13.5 քմ ավել է հանրապետական միջինից և քաղաքային համայնքներում 30.3 քմ, որը 3.4 քմ-ով բարձր է միջին հանրապետական ցուցանիշից:

Աղյուսակ 21. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2016. հունվարի 1-ի դրությամբ, մ²

	ընդամենը			այդ թվում՝ համայնքներում					
				քաղաքային			գյուղական		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
ՀՀ	30.9	31.4	31.6	26.2	26.7	26.9	39.0	39.5	39.8
Սյունիք	29.6	29.8	30.1	22.8	23.1	23.2	43.4	43.7	44.3
Վայոց ձոր	**44.4**	**44.9**	**45.2**	**29.8**	**30.1**	**30.3**	**52.4**	**52.9**	**53.3**

http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf

103. Ըստ ԱՎԾ տվյալների մարզում առկա է 10737 բնակելի տներ և 507 բազմաբնակարան շենքեր՝ 5080 բնակարաններով, որից՝ 4518-ը՝ քաղաքներում, իսկ 562 գյուղական բնակավայրերում: Մարզի բնակարանային ֆոնդը 2015թ. կազմել է 2.3 մլն.մ², որից քաղաքներում՝ 548 հազ.մ², գյուղերում՝ 1.8 մլն մ²: Մարզի մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակելի մակերեսով կազմում է 45.2 մ²: Սակայն պայմանավորված սողանքների առկայությամբ մեծ է վթարային առանձնատների թիվը՝ 3-րդ կարգի վթարային է 217 տուն, 4-րդ կարգի՝ 219 տուն, 5-րդ կարգի 4 տուն: Եղեգնաձոր քաղաքում 4-րդ կարգի վթարային է 1 բազմաբնակարան շենք:

Գծապատկեր 15. Աղքատությունը ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզում 2008, 2010 և 2015 թվականներին



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, http://armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

104. 2010-2015թթ. աղքատության մակարդակը ՀՀ Վայոց ձորի մարզում նվազեց 20.2%-ային կետով դառնալով 16.9%, իսկ ՀՀ Սյունիքի մարզում ընդամենը 2.3%-ային կետով դառնալով 24.5%, հանրապետության միջին ցուցանիշը կազմել է 29.8%: Նվազեց նաև ծայրահեղ աղքատությունը՝ ՀՀ Վայոց ձորում 1.2%-ային կետով՝ դառնալով 1%, իսկ ՀՀ Սյունիքի մարզում 1.0%-ային կետով՝ դառնալով 0.7%: Սակայն ՀՀ Վայոց ձորի մարզում երեխաների շրջանում 0.5%-ով ծայրահեղ աղքատությունը ավելի տարածված է, քան ՀՀ Սյունիքի մարզում:

105. Պետությունը տարբեր սոցիալական ծրագրեր է իրականացնում նվազեցնելու համար աղքատության մակարդակը: Հատկապես կարևորվում է ընտանեկան, սոցիալական նպաստները և հրատապ եռամսյակային օգնությունը: Սոցիալական տրանսֆերտների վճարումից հետո աղքատության մակարդակը ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում էլ նվազել է 1.4%-ով, իսկ ծայրահեղ աղքատությունը ՀՀ Վայոց ձորում 1%-ով, ՀՀ Սյունիքի մարզում 1.4%ով: 2015թ. մարզում ընտանեկան, սոցիալական նպաստներ են ստացել 2012 ընտանիք՝ մարզի ընտանիքների 13.9%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն 205 ընտանիք՝ մարզի ընտանիքների 1.4%-ը: Կենսաթոշակառուների թիվը կազմել է 9476 մարդ: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը 4663 է՝ մարզի բնակչության 9.1%-ը: Մարզում աշխատանքներ են տարվում հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ուղղությամբ՝ կառուցվում են թեքահարթակներ, իրականացվում է ներառական կրթություն, ապահովվում է մասնակցությունը մշակութային և սպորտային միջոցառումներին:

106. Մշակութային մատչելիություն: ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են 2 պատկերասրահներ, 2 մանկապատանեական ստեղծագործական կենտրոն, 3 թանգարան, 39 գրադարան, 5 արվեստի և գեղարվեստի, 1 երաժշտական դպրոցներ և 36 մշակույթի կենտրոն, մշակույթի տուն, ակումբ: Մշակույթի տներում գործում են ժողովրդական ստեղծագործության տարբեր ուղղությունների՝ պարարվեստի, թատերարվեստի, կերպարվեստի, երաժշտարվեստի, գորգագործության, փայտարվեստի և այլ խմբեր: Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 750 աշակերտներ:

107. Թանգարաններ, ցուցասրահներ, համերգասրահներ այցելուների քանակը տարեկան կտրվածքով կազմում է 3000-5000 մարդ: Գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը կազմում է ավելի քան 12000 մարդ: Գրադարանների շենքային պայմաններն հատկապես անբարենպաստ են գյուղական բնակավայրերում, ինչը խիստ վտանգում է հավաքածուների պահպանությունը և լիակատար օգտագործումը: Պետական ու ազգային տոներին, ավանդական ծեսերին ու տոնախմբություններին մասնակիցների թիվը տարեկան կազմում է շուրջ 8000 մարդ: Տարեկան կազմակերպվում է 5-13 թատերական և տիկնիկային ներկայացումներ: Մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիությունը բարձրացնելու, շահառուների թիվը ավելացնելու համար մարզում անհրաժեշտ է հիմնանորոգել մշակութային հաստատությունները, բարելավել նյութատեխնիկական պայմանները, վերապատրաստել կադրերը, համալրել նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուները:

108. Մարզում գործում է 4 մարզադպրոց: Մարզադպրոցներում մարզվում են 1964 մարզիկ՝ հանրապետության մարզիկների 4.8%-ը, որից 362 կին: 1964 մարզիկներից 610–ը (31%) գյուղական համայնքներից են: Գյուղերում սպորտային միջոցառումները կազմակերպվում են դպրոցների մարզադահլիճներում: Չնայած առկա դժվարություններին, մարզի սպորտային կոլեկտիվները կարողանում են մասնակցել մարզային և հանրապետական մարզական միջոցառումներին և գրանցել հաջողություններ: Արտադպրոցական մարզական խմբերի

պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 35-40%-ը: Մարզում մեծ դեր է հատկացվում սպորտի միջոցով առողջ ապրելակերպի խթանմանը:

109. Մարզում գործում են մարզային ենթակայության 8 բժշկական կազմակերպություններ՝ Եղեգնաձորում 1 բժշկական կենտրոն, Վայքում 1 բուժական միավորում և Ջերմուկում 1 առողջության կենտրոն, գյուղական համայնքներում՝ 5 առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Նշված բուժիմնարկներին ամրակցված են 35 բուժակ-մանկաբարձական կետեր: Մարզի բուժհաստատությունները ունեն մասնակի վերանորոգման, նորագույն բժշկական սարքավորումների, բժիշկ մասնագետների կարիք:

110. Մարզի ապահովվածությունը բժշկական կադրերով (22.4 բժիշկ 10 000 բնակչի հաշվով) ավելի քան երկու անգամ ցածր է քանի միջին հանրապետական ցուցանիշը (43.74 բժիշկ 10 000 բնակչի հաշվով): Միջին բուժանձնակազմի առումով տարբերությունը մարզի (46.85 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) և հանրապետության (58.80 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) ցուցանիշների մեջ այնքան էլ ցայտուն չէ: Հիվանդանոցային մահճակալների քանակով մարզը կրկին զիջում է միջին հանրապետական ցուցանիշին՝ մարզում առկա է 15.75 մահճակալ 10 000 բնակչի համար, հանրապետության 41.79 դիմաց:

111. Վերջին տարիներին աճել է արտահիվանդանոցային բժշկական օգնության դիմելու մակարդակը, միջինում 3.7 դիմում մեկ բնակչից, միևնույն ժամանակ այս մակարդակը շարունակում է ավելի ցածր մնալ, քան միջին հանրապետության ցուցանիշը, որը կազմում է միջինում 4.0 դիմում մեկ բնակչի հաշվով:

112. Նորագույն բժշկական տեխնիկայի բացակայությունը, բուժիմնարկների շենքային պայմանների անմխիթար վիճակը, մասնագետների բացակայությունը ստիպում է մարզի բնակիչներին առողջական խնդիրների առաջացման դեպքում այցելել մայրաքաղաքի հիվանդանոցներ, որը ստեղծում է հավելյալ ծախսեր և մատչելի չէ մարզի բնակչության համար:

3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

113. Օդի որակ: 2011-2015թթ. մթնոլորտային արտանետումները անշարժ աղբյուրներից նվազել է 10 անգամ: 2015 թվականին մարզի օդային ավազան է արտանետվել շուրջ 324.2 տոննա աղտոտող նյութեր, որը կազմում է հանրապետության ընդհանուր գրանցված արտանետումների 0.25%-ը: Այն գրեթե 7 անգամ փոքր է մեկ անձի հաշվով միջին հանրապետական ցուցանիշից: 1 քառ. կմ տարածքի հաշվարկով օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ: Ցածր է նաև օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակության ցուցանիշը՝ ՀՀ Վայոց ձորում 2015 թվականին գրանցվել է 23.3 տոննա մթնոլորտ արտանետված փոշի՝ հանրապետության ընդհանուր գրանցված արտանետումների 0.4%, որը ՀՀ Սյունիքի մարզում ավել է 9.7 անգամ (200.1 տոննա): Մարզի տարածքում վնասակար նյութեր 2014-2015 թվականներին չեն հայտնաբերվել:

114. Ջրի որակ: ՀՀ Վայոց ձորում 2015 թվականին օգտագործվել է հանրապետության օգտագործված ջրի 0.6%-ը, իսկ ՀՀ Սյունիքի մարզում 3.96%-ը: Մարզում ջրի ամենամեծ ծավալը՝ 91.1%-ը օգտագործվել է գյուղատնտեսության, իսկ ՀՀ Սյունիքի մարզում 84.9%-ը արդյունաբերության բնագավառում: Կորուստները կազմել է ՀՀ Վայոց ձորում ջրառի՝ 23.9%-ը, իսկ ՀՀ Սյունիքի մարզում՝ 12.5%-ը: Կորուստները նվազեցնելու համար կարևորագույն հիմնախնդիր է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը, ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգումը:

115. Արտանետվող կեղտաջրերի մակարդակը 2011-2015թթ. ավելացել է 2 անգամ 4.4 մլն.խ.մ-ից դառնալով 9.2: Մարզում աղտոտված և ոչ բավարար մաքրված կեղտաջրերը մեծ տեսակարար կշիռ ունեն և կարևոր նշանակություն ունի կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումն ու շահագործումը: ՀՀ Վայոց ձորի մարզում կեղտաջրերի մաքրում իրականացվում է միայն Ջերմուկ քաղաքում, մնացած բնակավայրերի կոյուղին միացված է հոսող գետերին:

Գծապատկեր 16. Հեռացված կեղտաջրերը, ըստ մաքրման աստիճանի



Աղբյուրը՝ ԱՎԾ <<Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2015թ.>> Հղումը՝http://armstat.am/file/article/eco_book_2015_9.pdf

116. Թափոններ: 2011-2015թթ. ՀՀ Վայոց ձորի մարզում կազմակերպություններում առաջացած թափոնների քանակն ավելացել է 4.5 անգամ 532.4 տ-ից դառնալով **2 378.6 տ**: Չնայած թափոնների աճին այն կազմում է Հանրապետության թափոնների 0.005%-ը: Աղյուսակ 22-ից երևում է, որ մեկ բնակչի հաշվով թափոնների քանակով ՀՀ Սյունիքի մարզը 3323.3 անգամ գերազանցում է ՀՀ Վայոց ձորի մարզին, իսկ մեկ քառ.կմ հաշվով՝ 4652.2 անգամ:

Աղյուսակ 22. Կազմակերպություններում առաջացած թափոնների քանակական տեսակարար ցուցանիշները , 2015թ.

	ընդամենը, տոննա	մեկ բնակչի հաշվով, կգ	մեկ քառ. կմ հաշվով, կգ
Սյունիք	21 604 078.9	154 535.6	4 794 513.7
Վայոց ձոր	**2 378.6**	**46.5**	**1 030.6**
ՀՀ	47 338 512.1	15 755.3	1 662 955.9

Հղումը՝ http://armstat.am/file/article/eco_book_2015_10.pdf

117. Հողի որակ: ՀՀ Վայոց ձորի մարզի հողածածկույթին բնորոշ է էրոզիայի բարձր ինտենսիվությունը, հատկապես՝ ցածրադիր կիսաանապատային հողերի գոտում: Երաշտները, խոնավության պակասը, ռելիեֆի մասնատման խորությունը, սելավերը նպաստում են հողերի անապատացմանը: Հանքարդյունաբերությամբ պայմանավորված աղտոտված հողերը կազմում են մարզի տարածքի 0.87%-ը:

118. Պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ: ՀՀ Վայոց ձորն ունի 4 արգելավայրեր 315.75 կմ^2 մակերեսով՝ «Հերհերի նոսր անտառներ» (մնացուկային գիհու նոսրանտառների պահպանություն), «Ջերմուկի անտառային» (խոշորառէջ կաղնու լեռնային անտառների և հազվագյուտ կենդանիների՝ բեզոարյան այծ, գորշ արջ, պահպանության), «Ջերմուկի ջրաբանական» (հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանների պահպանություն) և Եղեգնաձորի» (անտառային լանդշաֆտների և հազվագյուտ կենդանիների պահպանություն): Մարզը ունի 49 բնության հուշարձան (երկրաբանական՝ 23, ջրաերկրաբանական՝ 9, ջրագրական՝ 10, բնապատմական՝ 6, կենսաբանական՝ 1: 2014 թվականին անձնագրավորվել են բնության 4 հուշարձաններ: Ընթացքի մեջ է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից իրականացվող «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի ստեղծման և Կովկասի Բնության հիմնադրամի (CNF) կողմից դրա աջակցության աշխատանքները, որը համայնքային կառավարմամբ ԲՀՊՏ-ների ստեղծման փորձնական ծրագրի մոդել է: Ծրագրի շրջանակներում ստեղծվել է «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ և հարակից Խաչիկ և Մոզրով համայնքներին ցուցաբերվել է աջակցություն բնապահպանական, գյուղատնտեսական և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար:

119. 2016 թվականի դեկտեմբերի 12-ին «Ջերմուկ ազգային պարկի» ստեղծման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության միջև ստորագրվել է Փոխըմբռնման Հուշագիր, որով նախատեսվում է «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի բազայի վրա ստեղծել նոր՝ «Ջերմուկ» ազգային

պարկ: Փոխըմբռնման Հուշագրով նախատեսված միջոցները միտված են կենսաբազմազանության պահպանմանը, էկոտուրիզմի զարգացմանն ու էկոգյուղատնտեսական ծրագրեր ներդնելու միջոցով՝ «Ջերմուկ ազգային պարկի» կայուն զարգացման ապահովմանը:

120. Կենսաբազմազանություն: ՀՀ Վայոց ձորի մարզն ունի ինքնատիպ բուսական և կենդանական աշխարհ: Մարզն աղքատ է անտառներով (տարածքի 5.93% կամ 13687.8հա), սակայն անտառի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր՝ հազվագյուտ ու էնդեմիկ տեսակներ են: Հանդիպում են 400 դասի և 82 ընտանիքի պատկանող անոթավոր բույսերի մոտավորապես 960 տեսակներ: Ավելի քան 280 տեսակ (կենսաբազմազանության ավելի քան մեկ երրորդը) հազվադեպ և էնդեմիկ բուսատեսակներ են: ՀՀ–ում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը հանդիպում են ՀՀ Վայոց ձորի մարզում: Բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, կովկասյան ընձառյուծը, վայրի հնդկահավը, մորուքավոր անգղը, սպիտակագլուխ անգղը և սև անգղը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

121. Էլեկտրաէներգիա, էներգախնայողություն և վերականգնվող էներգետիկա: Բնապահպանական կարևոր խնդիր է էներգիայի նոր աղբյուրների օգտագործումը: ՀՀ Վայոց ձորի մարզում արևային էներգիայի օգտագործման հնարավորությունները մեծ է՝ արևոտ օրերի քանակը շատ է՝ արևափայլքի տարեկան միջին տևողությունը 2400-2700ժ է, անարև օրերի թիվը՝ 30-40: Եվրոմիության աջակցությամբ արևային էներգիայի օգտագործման սկիզբն է դրվում Վայք և Եղեգնաձոր քաղաքներում:

122. ՀՀ Վայոց ձորի բոլոր գետերն ու գետակները սրընթաց են, արագահոս, ունեն մեծ անկում ու թեքություն և հարուստ են էներգետիկ պաշարներ: ՀՀ Վայոց Ձորի մարզում ներկայումս էլեկտրաէներգիա են արտադրում 30 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 193 մլն.կվտժ՝ մոտ 69 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:

123. ՀԷԿ-երը ունեն նաև բացասական ազդեցություն՝ փոխել են գետերի ռեժիմը և խիստ բացասաբար անդրադարձել գետային ֆաունայի վրա (ձկների ձվադրման խնդիրներ, մանրաձկների կորուստներ):

124. Էներգախնայողություն: ՀՀ Վայոց ձորի մարզում ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ), Հաբիթաթ ֆոր հյումենթի Արմենիա հիմնադրամ, ՎիվաՍել ՄՏՍ, քաղաքապետների դաշինք և այլն) հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ: ՀՎԷԷՀ «Էներգախնայողության ծրագրի» շրջանակներում Վայքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացվել է էներգախնայողության միջոցառումներ, Վայք և Ջերմուկ քաղաքներում փողոցային լուսավորում: ՎիվաՍել ՄՏՍ-ի «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում կատարվել է Բարձրունի, Գնիշիկ, Մոզրով, Գոմք, Խնձորուտ, Մարտիրոս, Հորբետեղ, Արփի և Նոր Ազնաբերդ գյուղերի փողոցային լուսավորման աշխատանքներ: Վայք քաղաքն ընդգրկված է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Սպիտակ և Վայք քաղաքներում» ծրագրում, որի արդյունքում քաղաքի 18 բազմաբնակարան շենքերում և մշակույթի տան շենքում նախատեսվում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

125. ՀՀ Վայոց ձորն ունի հարուստ կենդանական և բուսական աշխարհ, այլընտրանքային էներգիայի հարուստ պաշարներ, օդը մաքուր է, սակայն կարևորագույն խնդիր է պայքարը հողերի էռոզացման և անապատացման դեմ, ջրի կորուստների նվազեցումը ինչպես նաև կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումն ու շահագործումը:

3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

126. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 2016թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 90 մարդ, որից 47.7%-ը կանայք են: Աշխատակիցներից 78-ը (86.6%-ը) ունեն բարձրագույն կրթություն: Մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներից 73-ը (81.1%) քաղաքացիական ծառայողներ են, որոնց համար կազմակերպվում են մասնագիտական կարողությունների և ունակությունների զարգացման վերապատրաստումներ:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի կառուցվածքը.



Գծապատկեր 17. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի մարզերում մարզպետարանի մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ.հունվարի 01-ի դրությամբ:



Աղբյուրը՝մարզպետարանների պաշտոնական կայքերում առկա տվյալների վերլուծություն:

127. 2010թ-ից մարզպետարանում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային՝ Mulberry համակարգի միջոցով: Այս համակարգը ապահովում է մարզպետարանի կապը հանրապետական կառավարման տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև մարզի համայնքապետարանների միջև:

128. 2015թ-ին մարզի համայնքների թիվը 44 էր, որից 3-ը (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ) քաղաքային և 41-ը գյուղական: 17.06.2016 թվականի <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելուց և համայնքների խոշորացումից հետո ՀՀ Վայոց ձորի մարզում ձևավորվեց 29 համայնք՝ Վայքի և Ջերմուկի տարածաշրջաններում նախկին 18 համայնքների փոխարեն ձևավորվեցին 3՝ Վայքի, Զառիթափի և Ջերմուկի խոշորացված համայնքները:

129. Համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքապետարաններն ունեն առավել կառավարման կարողություններ, քան նախկինում: Նշված ամեն մի համայնքապետարանի հաստիքային աշխատողների թիվը ՝44 է, սակայն կան դեռևս 7 թափուր աշխատատեղեր: Խոշորացված համայնքներից երկուսը ընդգրկում են քաղաքային համայնքներ, որոնք հանդիսանում են նաև համայնքային կենտրոններ:

130. Մարզի բոլոր համայնքապետարանների աշխատակազմերում աշխատում են 465 աշխատողներ, (184 համայնքային ծառայողներով, որոնցից՝ 116 (63%) բարձրագույն կրթությամբ): Համայնքների 44 ղեկավարներից ոչ մեկը կին չէ, իսկ 253 ավագանիներից՝ 18 կին (7.1%): Մյուս մարզերի հետ համեմատ ՀՀ Վայոց ձորի մարզում կանանց ներգավվածությունը տոկոսային արտահայտությամբ ամենացածր ցուցանիշն է: Համայնքների ղեկավարներից 22-ը (50%) բարձրագույն կրթությամբ, 19-ը միջին մասնագիտական և 3-ը միջնակարգ: Համայնքապետարանների գերակշիռ մասը գործում են շենքային պայմաններում, որոնցից որոշ գյուղական համայնքներում օգտագործվում են որպես համայնքային կենտրոններ (բուժկետով, գրադարանով, փոստի բաժանմունքով և այլն):

131. Գյուղական համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմել է 1205125.2 հազ. դրամ, որից ներդրումային (ֆոնդային) ծախսերը՝ 304970.2 հազ. դրամ, վարչական ծախսերը 958455.0 հազ. դրամ: Գյուղական համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015թ. կազմել են 697779.1 հազ. դրամ, կամ ընդհանուր բյուջեի 57.9%.:

132. Քաղաքային համայնքների ընդհանուր բյուջեի փաստացի կատարված ծախսերը 2015թ. կազմել է 580174.8 հազ. դրամ, որից ներդրումային (ֆոնդային) ծախսերը՝ 547303.1 հազ. դրամ, վարչական ծախսերը՝ 32871.6 հազ. դրամ: Քաղաքային համայնքների աշխատակազմի պահպանման փաստացի ծախսերը 2015թ. կազմել է 189926.2 հազ. դրամ, կամ ընդհանուր բյուջեի 32.7% :

133. Մարզպետարանի ընդհանուր պահպանման և ներդրումային ծախսերի բյուջեն 2016թ կազմել է 2.556 մլն ՀՀ դրամ, որից մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը կազմել է 376.784 հազ. դրամ, կամ ընդհանուր բյուջեի 14.7%:

134. Կարևորելով տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացումը և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների որակավորման բարձրացումը, իրականացվում են տարբեր վերապատրաստումներ, բյուջետային կարողությունների զարգացման և տեղական եկամուտների գույքահարկի հավաքագրման աճի ապահովման նպատակով հողի հարկի տեղեկատվական շտեմարանների վարման և այլն:

Աղյուսակ 23. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքային ծառայողների, համայնքի ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումները 2011-2015թթ.

Վերապատրաստում անցած՝	2011	2012	2013	2014	2015
Համայնքային ծառայողներ	83	40	29	81	21
Համայնքի ղեկավար, ավագանու անդամներ	50	50	50	50	50

Աղբյուրը՝ Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչության տվյալներ

135. Ազգաբնակչությանը համայնքային ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման առումով, մարզի 21 համայնքներում ներդրվել են «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ»-եր (ՀԿՏՀ):

136. Ներկայումս համայնքային համացանցային կայքեր ունեն 7 համայնք, ևս 8 համայնքներ շուտով կունենան իրենց համայնքային կայքերը: Համակարգը ներդրած մի շարք համայնքներում դեռևս չի ապահովում բավարար տեղեկատվություն, կապված տեխնիկական հագեցվածության և մասնագիտական կարողությունների բացակայության հետ:

137. ՓՄՁ պետական աջակցության ծրագրեր ՀՀ Վայոց ձորի մարզում 2004թ.-ից իրականացվում են ՓՄՁ ԶԱԿ-ի ՀՀ Վայոց ձորի մասնաճյուղի միջոցով: Մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ համագործակցված աշխատանքի արդյունքում 2015թ-ին 2011թ-ի դրությամբ կրկնապատկվել և եռապատկվել են իրականացվող ծրագրերի քանակը և ծավալները:

138. Մարզում ակտիվ է նաև հասարակական սեկտորը, հատկապես կրթական, սոցիալական, բնապահպանական ոլորտներում: Գործող 37 հասարակական կազմակերպություններից ակտիվ է 15-ը, որոնք համագործակցում են մարզպետարանի

ստորաբաժանումների հետ: Հասարակական կազմակերպությունները հիմնականում գործում են քաղաքային համայնքներում:

139. Մարզի կարողությունների գնահատման տեսակետից կարևոր է այն հանգամանքը, որ փոքրաթիվ բնակչության առկայության դեպքում, մարզային կառավարման բավականին մեծ ռեսուրսներ կան համեմատած հարևան ՀՀ Սյունիքի և Արարատի մարզերի, ինչը հնարավորություն է տալիս կառավարումը ավելի արդյունավետ դարձնել:

3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

140. ՀՀ Վայոց ձորի մարզում հատուկ ռիսկերի ներքո գտնվող տարածքներ.

1) Սողանքային գոտի: Սողանքային գոտում գտնվում է մարզի 7 բնակավայրերի 329 հա տարածքներ:

2) Քարաթափման գոտի: Քարաթափման գոտում գտնվում է մարզի 9 համայնքների 49.6 հա տարածքներ:

3) Գետերի վարարման գոտի: Գետերի վարարման գոտում գտնվում է մարզի 8 համայնքներ:

4) Սահմանամերձ վտանգավոր գոտի: Մարզում մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող սահմանամերձ հողատարածքները տեղաբաշխված են 6 համայնքների վարչական սահմաններում և կազմում են շուրջ 2390 հեկտար, որից 647 հեկտարը քաղաքացիների սեփականությունն են, իսկ մնացած 1743 հա համայնքային կամ պետական սեփականության հողեր են: Այդ տարածքները ազգաբնակչության կողմից չեն օգտագործվում, կամ օգտագործվում են մասնակի, քանի որ գտնվում են սահմանամերձ վտանգավոր գոտում կամ ականապատված են:

141. ՀՀ Վայոց ձորի մարզի 11 սահմանամերձ համայնքներից ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ 5 համայնքներ ընդգրկվել են հողի հարկի, գույքահարկի և օգտագործած էլեկտրաէներգիայի, գազի, ոռոգման ջրի, արժեքների դիմաց սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում:

IV. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

142. ՈՒԹԿՀՎ վերլուծությունը ապահովում է տարածքային զարգացման ոլորտում ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

Աղյուսակ 24. Վայոց ձորի մարզի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
• Հանքային ջրի արդյունահանման ծավալների աճ • Զբոսաշրջիկների կողմից հետաքրքրության աճ մարզի նկատմամբ	• Բնական պաշարների թերի շահագործում • Կարկտահարություն դեմ պայքարի ցածր մակարդակ Սողանքների առկայություն • Սեյսմիկ ռիսկեր
3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ	
	• Ամենանոսր բնակեցված մարզն է • Բացասական ժողովրդագրական միտումներ
3.3 ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	
• Ջերմուկ քաղաքը, որպես մարզի զարգացման խթան • Հետարդյունաբերական տարածքների օգտագործման հնարավորություն Եղեգնաձոր և Վայք քաղաքներում	• Քաղաքային բնակչության նվազում • Չգրանցված գործազրկության բարձր մակարդակ
3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
• Միջպետական նշանակության ճանապարհը, որը ծառայում է ինչպես ներմարզային այնպես էլ տրանզիտային փոխադրումների համար դեպի Սյունիքի մարզ, Արցախ և Իրան	• Առկա տրանսպորտային միջոցների մաշվածություն • Տրանսպորտային ենթակառուցվածքների ֆիզիկական մաշվածություն • Ավտոմոբիլային տրանսպորտի այլընտրանքի բացակայություն
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	
• Համայնքներում 20 և ավելի ժամ ջրամատակարարում	• Ենթակառուցվածքների ֆիզիկական մաշվածություն • Աղբավայրերի ոչ ճիշտ տեղակայում և շահագործում • Գազաֆիկացման ցածր մակարդակ • Կոյուղաջրերի մաքրման կայանների բացակայություն (բացառությամբ Ջերմուկի)
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
• <<Արենի>> գինու բրենդի ճանաչելիություն • <<Ջերմուկ>> հանքային ջուր բրենդի ճանաչելիություն • Մարզի գյուղատնտեսական արտադրանքի մեծ պահանջարկը հանրապետությունում	• ՀՆԱ-ի ցածր մակարդակ մեկ շնչի հաշվով • Գյուղատնտեսական մթերքների վերամշակող կազմակերպությունների փոքր քանակ • Վարելահողերի ցածր ոռոգելիություն • Գյուղատնտեսական նշանակության հողերի կտրտվածություն • Շուկայի պահանջարկի կանխատեսման համակարգի բացակայություն • Տրանսֆերտների ցածր մակարդակ մեկ

	շնչի հաշվով • Գյուղատնտեսության մրցունակության ցածր աստիճան, գյուղատնտեսականմթերքների բարձր ինքնարժեք
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
• Բնակչության տնտեսական ակտիվության բարձր մակարդակ • Զբաղվածության բարձր մակարդակ • Գործազրկության ցածր մակարդակ	• Գյուղատնտեսական, ցածր վարձատրվող զբաղվածության բարձր մակարդակ գյուղական համայնքներում
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	
• Զարգացող զբոսաշրջություն	• Էքստենսիվ գյուղատնտեսություն (բնատնտեսություն) • ՀՆԱ-ի ցածր մակարդակ մեկ շնչի հաշվով • ՀՀ–ի միջինից ցածր արտահանման և ներմուծումման մակարդակ
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	
• Նախադպրոցական հաստատությունների առկայություն • Համընդհանուր անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության մատչելիություն/հասանելիություն • Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն • ԲՈՒՀ-ի առկայություն	• Երիտասարդության ԲՈՒՀ-ական կրթություն ստանալուց հետո մարզ վերադառնալու ցածր աստիճան • Կրթական համակարգի կողմից առաջարկված մասնագիտությունների և շուկայի պահանջների անհամապատասխանություն • ՆՈՒՀ- երի թիվը նվազում գյուղական բնակավայրերում • Աշակերտների թվի նվազում • Ներառական կրթություն իրականացնող դպրոցների փոքր թիվ • Բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների դպրոցներում մանկավարժների պակաս • ԲՈՒՀ -ական կրթություն ունեցող շրջանավարտների նվազում • Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ
3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	
• Բնակելի մակերեսով ապահովվածության բարձր մակարդակ • Աղքատության և ծայրահեղ աղքատության ցածր մակարդակ	• ժամանակակից պայմաններին անհամապատասխան բժշկական սպասարկման շենքային պայմաններ • Բժշկական նոր սարքավորումների բացակայություն • Բժիշկական նեղ մասնագետների պակաս • Վթարային առանձնատների առկայություն
3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	
• Օդի ցածր աղտոտվածություն • Հարուստ բուսական և կենդանական աշխարհ • Էներգախնայողության դրական փորձ • Արգելավայրերի առկայություն	• Ջրի մեծ կորուստներ • Հողերի էռոզացում և անապատացում • Կեղտաջրերի մաքրման կայանների բացակայություն (բացի Ջերմուկից) • Աղբավայրերի ոչ ճիշտ ընտրություն և շահագործում • Լեռնահանքային արդյունաբերության օբյեկտներով զբաղեցրած հողերի աղտոտում

	• Օբյեկտներում (շենքեր, շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության և էներգաարդյունավետության ցածր մակարդակ • Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր մակարդակ
3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
• Մարզային կառավարման մարմինների բարձր կարողություններ	• ՏՏ մասնագետների պակաս • Որոշ գյուղական համայնքների ինտերնետ կայքերի բացակայություն
3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ	
• Հարկային արտոնություններ սահմանամերձ 5 համայնքներին	• Սողանքներ • Քարաթափումներ • Գետերի վարարումներ • Հրետակոծության տակ գտնվող հողերի առկայություն

Հնարավորություններ	***Սպառնալիքներ***
3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, 3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, 3.3 ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	
• Մարզի աշխարհագրական դիրքը՝ Իրան Հայաստան մայրուղու վրա գտնվելը • Արևային էներգիայի օգտագործման մեծ հնարավորություններ • Տարաբնույթ (արկածային, պատմամշակութային, առողջարանային և այլ) • Զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորություններ • Պատմամշակութային հուշարձանների առկայություն • Հարուստ բնական պաշարներ	• Սահմանամերձ լինելը Ադրբեջանի հետ, • Սողանքների առկայություն • Ցրտահարությունների բարձր մակարդակ • Երաշտի բարձր հավանականություն • Ռուսաստանի Դաշնությունում իրականացվող ծրագրերի շրջանակներում մարդկանց արտագաղթ • Պատերազմական գործողությունների վերսկսման վտանգ
3.4. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
• Հայաստան- Իրան ճանապարհը	• Բեռների ծավալների նվազում • Սոցիալ տնտեսական իրավիճակից ելնելով ուղևորափոխադրման նվազում • Ձմեռային ամիսներին ճանապարհների դժվար անցանելիություն
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	
• Դեպի Գեղարքունիք այլընտրանքային ճանապարհի առկայություն • Իրան–Հայաստան գազատարի առկայությունը • Հյուսիս-հարավ մայրուղին անցնելու է մարզի տարածքով	• Սողանքներ և քարաթափումներ մարզի ճանապարհներին
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
• Տեղական գյուղատնտեսական մթերքների հիման վրա վերամշակող կազմակերպությունների զարգացման հնարավորություն • Անասնապահության զարգացման համար	• Կլիմայի փոփոխության ազդեցության մեծացումը գյուղատնտեսության վրա

արոտավայրերի առկայություն • Մարզում բնապահպանական և սոցիալական տեսանկյուններից պատասխանատու հանքարդյունաբերության ներուժի առկայություն	
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
• Վերապատրաստման հնարավորություն	• Արտագնա աշխատանքի մեկնող որակյալ մասնագետների թվաքանակի աճ
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	
• Տուրիստական ենթակառուցվածքների առկայություն • Ներդրումային ծրագրերի առկայություն	• Գյուղատնտեսության արդյունքների մեծ կախվածություն բնակլիմայական պայմաններից • Տնտեսության աճի դանդաղ տեմպեր
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	
• Միջին տարիքի անձանց համար որակավորման դասընթացների առկայություն	• Բարձրագույն կրթություն ունեցող անձանց արտագաղթը
3.10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	
• Սոցիալական աջակցության ոլորտի հասցեականության բարձրացում	• Մշակույթի նկատմամբ բնակչության հետաքրքրության նվազում • Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության նվազում
3.11 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	
• Արևային օրերի մեծ քանակը էներգիայի արդյունահանման հիմք • Հանրային և բնակելի սեկտորում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն • Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորություն	• Կլիմայի փոփոխության ազդեցության մեծացումը գյուղատնտեսության վրա
3.12 ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
• Տարածքային կառավարման տեղեկատվական համակարգի կիրառման մեծ հնարավորություններ • Համայնքների խոշորացում	• Բնակչության արտագաղթի աճ
3.13 ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ	
• Սահմանամերձ համայնքները արտոնությունների շնորհիվ կարող են ունենալ զարգացման մեծ հնարավորություններ	• Սողանքներ • քարաթափումներ • Մարտական գործողությունների վերսկսման վտանգ • Հրետակոծության տակ գտնվող հողեր

V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1.ՏԵՍԼԱԿԱՆ

143. ՀՀ Վայոց ձորի մարզը 2025 թվականին կլինի զբոսաշրջային գրավչությամբ հայտնի, մրցակցային արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող համաչափ զարգացած մարզ:

5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

144. ՀՀ Վայոց ձորի ռազմավարական նպատակները, 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ամենաուժեղ կողմերի և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթղթի վերլուծական մասում:

145. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունը ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները (հորիզոնական) և գերակա թեմաները/ոլորտները (ուղղահայաց) և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթղթերի հետ, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 25. ՀՀ Վայոց ձորի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման ռազմավարական նպատակներ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարական նպատակներ 2016-2025թթ.
Մինչ 2025 թ., մարզում բարձր կրթամակարդակ ունեցողների թվի աճ և տնտեսական կայուն աճի ապահովում՝ որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծում, • ոչ գյուղատնտեսական ոլորտում որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծում ավել քան 10%-ով, • Ակտիվ կազմակերպությունների աճ 10%-ով, • միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թվի աճ 10%-ով, • մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի աճ 10%-ով:	Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ (2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների,ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակը կաճի առնվազն 10%-ով ՝ համեմատած 2014թ.-ի հետ:)
2. Մարզի համայնքների համաչափ զարգացում մինչև 2025թ.՝ • երիտասարդության երկարաժամկետ գործազրկություն կրճատում 5%-ով, • աղքատության կրճատում 5%-ով, • 2025թ.-ի դրությամբ թույլ զարգացած և	Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա:

սահմանամերձ համայնքների գործազրկության մակարդակի նվազեցում 5%-ով, • 2025թ.-ի դրությամբ բարելավել սահմանամերձ համայնքների ենթակառուցվածքները, • կբացվեն 5 նոր կազմակերպություններ սահմանամերձ 5 համայնքներում:	(2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել, քան 30%-ը:)
3. Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և համայնքային դերակատարների ակտիվության բարձրացում և մասնակցություն տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում • մինչ 2025 թ., մարզը կունենա 7 խոշորացված համայնք (2017թ.), • մարզային և **համայնքային ծառայողների** 30%-ը յուրաքանչյուր տարի կընդգրկվի վերապատրաստման ծրագրերում, • մարզի քաղաքացիական հասարակության մասնակցությունը տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում կաճի 20%-ով:	Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: Համայնքների, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի դերակատարների կողմից ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցությանը 50%-ից հասցնել 70%-ի:

1. Զբոսաշրջության զարգացում՝ (պատմամշակութային տուրիզմ, էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, արկածային տուրիզմ, քարանձավային տուրիզմ,գյուղական տուրիզմ)	2. Վերամշակող արդյունաբերության զարգացում	3. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրգանիկ գյուղատնտեսական մթերքի արտադրություն

ՄԶՌ հիմնական գերակայություններ

Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում

Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ.

5.3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

146. <u>Ռազմավարական նպատակ 1</u>: Մինչև 2025թ., մարզում բարձր կրթական մակարդակ ունեցողների թվի աճ և տնտեսական կայուն աճի ապահովում՝ որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծում, ոչ գյուղատնտեսական ոլորտում՝ ավելի քան 10%-ով, ակտիվ կազմակերպությունների աճ 10%-ով, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թվի աճ՝ 10%-ով, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը աճ 10%:

147. Հիմնավորում: Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 1-ին նպատակը բոլոր մարզերում մրցունակության բարձրացումն է հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ:

148. <u>Ռազմավարական նպատակ</u> 2: Մինչև 2025թ. մարզի թույլ զարգացած (սահմանամերձ) բնակավայրերի տնտեսական, սոցիալական և տարածքային անհամաչափությունների նվազեցում՝ 20%-ով, երիտասարդության երկարաժամկետ գործազրկություն կրճատում՝ 5%-ով, աղքատության կրճատում՝ 5%-ով:

149. Հիմնավորում: Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 1-ին և 2-րդ նպատակներ՝ տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների վրա:

150. <u>Ռազմավարական նպատակ</u> 3: Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և համայնքային դերակատարների ակտիվության բարձրացում և մասնակցություն տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում: Մինչ 2025թ. մարզը կունենա 7 խոշորացված համայնք (2017թ.),մարզային և համայնքային աշխատողների 30%-ը տարեկան կընդգրկվի վերապատրաստման ծրագրերում, մարզի քաղաքացիական հասարակության մասնակցությունը տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում կաճի 20%-ով:

151. Հիմնավորում: Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության 3-րդ նպատակը տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավման, զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:

152. Գերակա խնդիր 1: Զբոսաշրջության զարգացման խթանում՝ շեշտը դնելով պատմամշակութային տուրիզմի, էկոտուրիզմի, առողջարանային տուրիզմի, արկածային տուրիզմի, քարանձավային տուրիզմի և գյուղական տուրիզմի զարգացման վրա:

153. Հիմնավորում: ՀՀ Վայոց ձորի մարզն ունի տուրիզմի զարգացման մեծ հնարավորություններ՝ Ջերմուկ առողջարանային քաղաքը, 1200 պատմամշակութային, 49 բնության հուշարձաններ և 4 արգելավայրեր: Արենիում հայտնաբերվել է աշխարհի հնագույն ոտնամանը և գինու արտադրության համալիրը: ՀՀ Վայոց ձորի մարզով է անցնելու Հյուսիս-Հարավ ճանապարհը: Զարգացման մեծ հեռանկար ունեն զբոսաշրջության պոտենցիալ ունեցող նոր ուղղություններ՝ լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, էկոտուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու և այլն: Զարգանում է գյուղական տուրիզմը, որը մեծ հնարավորություն է գյուղական բնակավայրերի համար՝ ապահովելով եկամուտ և ոչ գյուղատնտեսական աշխատատեղեր: Զբոսաշրջության զարգացումը մարզում նշանակում է նաև գյուղատնտեսության և ծառայությունների զարգացում:

154. Գերակա խնդիր 2: Վերամշակող արդյունաբերության զարգացում:

155. Հիմնավորում: ՀՀ Վայոց ձորի մարզում իրատեսական է վերամշակող արդյունաբերության զարգացումը, քանի որ առկա է անհրաժեշտ աշխատուժ և հումք՝ գյուղատնտեսական մթերք, բնական պաշարներ: Այն կնպաստի զբաղվածության ընդլայնմանը, քաղաքների զարգացմանը, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճին, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանը:

156. Գերակա խնդիր 3: Գյուղատնտեսության մեքենայացում, արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, օրգանիկ գյուղատնտեսական մթերքի արտադրություն, գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանում:

157. Հիմնավորում: ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Սակայն ավանդական գյուղատնտեսությունը իր զարգացման հնացած մոդելով ի վիճակի չէ ապահովել համաչափ և մրցունակ զարգացում, ուստի անհրաժեշտ է խթանել նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի օգտագործման հնարավորությունները: Մեծ ծավալ ունեն չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը: Հողերի որակի բարձրացման համար անհրաժեշտ է կատարել հողերի մելիորացիա: Շեշտը պետք է դրվի օրգանիկ գյուղատնտեսական մթերքի արտադրություն, ցանքային տարածությունների, պտղի և հատապտղի տնկարկների ավելացման և ինտենսիվ մշակությամբ այգիների հիմնման վրա:

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

158. ՀՀ Վայոց ձորի հետևյալ ՄԶՌ գերակայությունները կնպաստեն ռազմավարական նպատակների իրականացմանը: Կարևորության առումով դրանք գալիս են ավելի վաղ ներկայացված գերակայություններից հետո (գերակա խնդիրներ):

Աղյուսակ 26. Վայոց ձորի մարզի գերակայությունները

Թեմա	Գերակայություն	Հիմնական շահառուներ	Կապը՝ պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	1. Հանքերի բնական պաշարների ռացիոնալ օգտագործում,	Մարզի բնակչություն	28.11.2011թ.<<ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-280-Ն օրենք
ժողովրդագրական իրավիճակ			
Քաղաքների զարգացում	2. Քաղաքները, որպես մարզային զարգացման կենտրոններ՝ ենթակառուցվածքների բարելավում և նոր ՓՄՁ-ների հիմնում	Քաղաքներ, մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ -Քաղաքային զարգացման բևեռների հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ:
Տրանսպորտ,			

հաղորդակցում և տեղեկատվական հասարակություն			
Հանրային ենթակառուց-վածքներ	3. Աղբահանության և կոյուղու համակարգերի բարելավում, Եղեգնաձոր և Վայք քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում 4. Մարզային և միջհամայնքային ճանապարհների բարելավում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ -Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի:
Ներքին արտադրանք և եկամուտներ			
Զբաղվածություն	5. Գործազրկության մակարդակի կրճատում, մասնավորապես խթանելով երիտասարդների համար նախատեսված ոչ գյուղատնտեսական նոր աշխատատեղերի ստեղծումը 6. Ինքնազբաղվածության խթանում և նոր ստեղծվող ՓՄՁ-ների աջակցություն	Բնակչություն, գործազուրկ աշխատունակ բնակչություն և նրանց ընտանիքի անդամներ և ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ - Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ -ինքնազբաղված անձանց համար առավել արտոնյալ պայմանների սահմանում, ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ - Տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ:
Մարզային տնտեսության կառուցվածք,	7. Վերամշակող արդյունաբերության զարգացում, մասնավորապես <<Արենի>>	Բնակչություն, տնային տնտեսություններ,	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության

հիմնական ոլորտներ	գինու բրենդի վարկանիշի և մրցունակության բարձրացում **(գերակայություն)** 8. Գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, ներառյալ գյուղատնտեսական մթերքի արտադրություն **(գերակայություն)**, 9. Գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանում 10. **Զբոսաշրջության զարգացում (հիմնական գերակայություն)**	ակտիվ կազմակերպությունների	կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ - զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների (լեռնագնացություն,հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, էկոտուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու և այլն)՝ արդեն իսկ գործող մասնավոր նախաձեռնություններին աջակցություն և զարգացման ծրագրի մշակում՝ նպատակ ունենալով 5 տարվա ընթացքում առնվազն եռապատկել զբոսաշրջիկների թիվը, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ - չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ներգրավման և ոռոգվող տարածքների ընդարձակման մեխանիզմների մշակում, իրականացում. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի <<ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> N1476-Ն որոշում՝ -2017թ. սկսած մսի իրացման և գնման գործընթացում պարտադիր սպանդանոցային մորթի փուլային անցում՝ մինչև 2021թ. ամբողջովին սպանդանոցային մորթի անցնելու նպատակով:
Կրթություն և մարդկային կապիտալ	11.Աջակցություն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով, 12. Համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում, որը հնարավորություն է ընձեռում	Բնակչություն, կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, Հաշմանդամություն ունեցող անձիք	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ - Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակի աճ: ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի նիստով հավանության արժանացած <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի

	անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության, 13. 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովում		իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> թիվ 1 արձանագրային որոշում:
Սոցիալական ներառում	14.Գործազրկության և աղքատության մակարդակի նվազեցում 15.Առողջապահական կազմակերպությունների վերազինումը նորագույն տեխնիկայով	Գործազուրկներ և աշխատանք փնտրողներ, աղքատության շեմից ցածր գտնվող անձինք և նրանց ընտանիքի անդամներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ - առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման շարունակական աշխատանքների իրականացում.
Բնապահպանական հարցեր, էներգաարդյունավետություն	16.Վերականգնվող էներգետիկայի օգտագործման մակարդակի բարձրացում, մասնավորապես արևային էներգախնայող համակարգերի ներդրմամբ 17.Շրջակա միջավայրի (արգելավայրերի և այլն) պահպանում 18.Էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումներ հանրային հատվածի օբյեկտներում 19. Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորության խթանում	Բնակչություն, մարզի համայնքներ, ակտիվ կազմակերպություններ Մարզի հանրային օբյեկտներ, համայնքների բնակչություն	ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի 11-րդ կետով հավանության արժանացած ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» N41 արձանագրային որոշում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ -Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակներում արևային համակարգերի կառուցում: ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ - Շրջակա միջավայրի պահպանություն և էներգաարդյունավետություն: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 02-ի նիստի 7-րդ կետով հավանության արժանացած <<2017-2018 թվականների

			Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին>> N 4 արձանագրային որոշում՝ էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի:
Մարզային և տեղական կարողությունների զարգացում	20.Մարզային և համայնքային զարգացման կառավարման կարողությունների բարելավում՝ տարեկան անձնակազմի 30%-ի վերապատրաստման միջոցով	Բնակչություն, մարզի համայնքներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ - Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:
Այլ խնդիրներ	21.Բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների համաչափ զարգացում	Բարձր լեռնային և սահմանամերձ տարածքներ բնակչություն, համայնքներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ -<<Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա>> ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշում՝ Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող այն սահմանամերձ համայնքների, որտեղ իրականացվող գործունեությունն ազատվում է հարկերից, ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշում՝ փոխհատուցում է

			նախատեսվում նաև որոշման N 1 հավելվածով սահմանված սոցիալական աջակցություն ստացող համայնքների ցանկում ընդգրկված համայնքների հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարների գծով:

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

159. ՀՀ Վայոց ձորի մարզի ռազմավարական ծրագրերը, որոնք շարունակական են և ակնկալվող, գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների՝ ռազմավարական կողմնորոշում մարզային զարգացման ռազմավարական նպատակների և գերակայությունների հետ, արժեք-օգուտ հարաբերակցություն, ծրագրի իրագործելիություն:

Աղյուսակ 27. Վայոց ձորի մարզի ռազմավարական ծրագրեր

	Ծրագրի անուն /թեմա	Կարճ նկարագիր	Արժեք	Իրականացնող մարմին	Առաջնահերթությունը	Ժամանակահատված
1.	Արևային էլ. կայանի կառուցում և զբոսաշրջության ենթակառուցվածքների կառուցում	Կկառուցվի 1ՄԳՎ հզորությամբ էլ. կայանի և կմշակվի զբոսաշրջայի երթուղի և կկառուցվի համապատասխան ենթակառուցվածքներ	2 085 000ԵՎրո	ՀԿ (համաձայնությամբ)	15	2017-2019թթ
2.	Օրգանիկ մթերքների վերամշակում	Օրգանիկ մթերքների արտադրություն և վերամշակում	500 000 ԵՎրո	Եղեգնաձորի պահածոների գործարան (համաձայնությամբ)	15	2017-2020թթ.
3.	Այծի պանրի արտադրության ընդլայնում	Այծի պանրի արտադրության ընդլայնում	150 000 ԵՎրո	Գոլդեն Գոուոթ ՍՊԸ (համաձայնությամբ)	14	2017թ.
4.	Զառիթափ համայնքում տրանսպորտային պարկի ստեղծում և ենթակառուցվածքների վերանորոգում	Ձեռք կբերվի 4 տեխնիկա և կվերանորոգվի ենթակառուցվածքները	650 000 ԵՎրո	ՀՏՋՀ (համաձայնությամբ)	12	2017թ.
5.	Վայք համայնքում տրանսպորտային պարկի ստեղծում և ենթակառուցվածքների վերանորոգում	Ձեռք կբերվի 4 տեխնիկա և կվերանորոգվի ենթակառուցվածքները	650 000 ԵՎրո	ՀՏՋՀ (համաձայնությամբ)	12	2017թ.
6.	Ջերմուկ համայնքում տրանսպորտային պարկի ստեղծում	Ձեռք կբերվի 8 տեխնիկա	700 000 ԵՎրո	ՀՏՋՀ (համաձայնությամբ)	12	2017թ.

7.	Եղեգնաձոր քաղաքում նոր դպրոցի շենքի կառուցում	Կկառուցվի 400 տեղանոց դպրոց	2 692 000 ԵՎրո	ՀՏՀՀ (համաձայնությամբ)	10	2017-2019թթ.
8.	Ջերմուկում նոր հյուրանոցի կառուցում	Կկառուցվի 500 տեղանոց առողջարան-հյուրանոց	5 000 000 ԵՎրո	Մասնավոր ներդրողներ (համաձայնությամբ)	9	2015-2020թթ

160. Վերը նշված աղյուսակում նշված ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

161. ՏՁՌ համակարգումը և իրականացումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով:

162. Գործնականում ՏՁՌ-ն փաստացի իրականացվելու և/կամ աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից.

1) Մարզային վարչակազմերի կողմից, հիմնականում՝

ա. ՏՁՌ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,
բ. Մարզի ՏՁՌ նախապատրաստման միջոցով՝ մշակում, վերանայում և փոփոխում՝ ըստ պահանջի,
գ. ՏՁՌ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով,
դ. ՏՁՌ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,
ե. Բոլոր շահագրգիռ կողմերին ՏՁՌ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցով,
զ. Տեղական կառավարական մարմիններին իրենց զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,
է. Հասարակական միավորումներին և այլ շահագրգիռ կողմերին աջակցության տրամադրման միջոցով՝ տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ,
ը. Տեղական զարգացման և ծրագրերի պլանավորմանն ուղղված միջքաղաքային համագործակցության խրախուսման միջոցով,
թ. Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

2)Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հիմնականում՝

ա. Տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործառույթների իրականացման միջոցով,
բ. Տեղական զարգացման պլանավորման և իրականացման միջոցով,
գ. Ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

3)ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ այլ նախարարությունների հետ համագործակցության միջոցով, հիմնականում՝

ա. Տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման միջոցով,

բ. Պետության տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների հետ համահունչ ՏԶՌ իրականացման վերաբերյալ պատկերացում տրամադրելու միջոցով,
գ. Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացման միջոցով:

163. Ի հավելումն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,
2) ՏԶ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,
3) Պատրաստում և ՀՀ կառավարություն է ներկայացնում տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ զեկույցները,
4) Կազմակերպում և համակարգում է ՏԶՌ-ների մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

164. Դոնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից, հիմնականում ՏԶՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:

165. Հասարակական կազմակերպությունների կողմից, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլնի միջոցով:

166. Մասնավոր հատվածի դերակատարների կողմից, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:

167. Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ՏԶՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական առաջադրանքները մարզում: ՏԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

168. ՏԶՌ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիտորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով:

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

169. Տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի, և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) Պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ:
2) ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

170. Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը.

1) 2025թ.-ի դրությամբ՝ մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը 68%-ից հասցնել առնվազն 78%-ի,

2) 2025թ.-ի դրությամբ՝ ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի ավելացում ոչ պակաս, քան 10 %-ով՝ 56.3% պետք է դառնա առնվազն 66.3%-ի,
3) 2025թ.-ի դրությամբ՝ 2025թ.-ի դրությամբ նոր արտադրական կազմակերպությունների թվի ավելացում ոչ պակաս, քան 10%-ով՝ 121-ից պետք է դառնա 135,
4) 2025թ.-ի դրությամբ՝ զբոսաշրջիկների թվի ավելացում 20%-ով՝ 8000-ից 10000 մարդ,
5) 2025թ.-ի դրությամբ՝ մարզի 10.1% գործազրկության մակարդակը նվազեցնել 5%-ով, հասցնելով 5.1%
6) 2025թ.-ի դրությամբ՝ երիտասարդության երկարաժամկետ գործազրկություն կրճատում 5%-ով՝ 718 մարդուց հասցնելով 680-ի,
7) 2025թ.-ի դրությամբ՝ գյուղատնտեսության համախառն ներքին արտադրանքում օրգանիկ գյուղատնտեսական մթերքների ծավալը 2%-ից դարձնել 5%,
8) 2025թ.-ի դրությամբ՝ գյուղատնտեսական տեխնիկայի ընդհանուր ծավալում 10 տարեկանից ոչ ավելի գյուղատնտեսական մեխանիզմների քանակը 12%-ից դարձնել 20%,
9) 2025թ.-ի դրությամբ՝ աղքատության կրճատում 5%-ային կետով՝ 16.9%-ից դարձնել 11.9%,
10) 2025թ.-ի դրությամբ՝ սահմանամերձ համայնքներում 5 արտադրական կազմակերպությունների կամ կազմակերպությունների մասնաճյուղերի հիմնում,
11) 2025թ.-ի դրությամբ՝ սահմանամերձ համայնքներ տանող միջհամայնքային ճանապարհների հիմնանորոգում,
12) 2025թ.-ի դրությամբ՝ մասնակցություն տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում ՔՀԿ՝ 20%-ով,
13) 2025թ.-ի դրությամբ՝ մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և համայնքային դերակատարների ակտիվության բարձրացում 20%-ով՝ 50%-ից դարձնել 70%:

171. Այս ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն ՀՀ Վայոց ձորի մարզի վարչակազմի կողմից, և արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ առաջընթացի զեկույցում:

172. ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզի վարչակազմի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչների ցանկը (դրանք չափում են ռազմավարական նպատակներին հասնելը) պետք է մշակվի և ընդգրկվի տեքստում: Այս ցուցանիշները պետք է գնահատվեն տարեկան առումով՝ մարզի վարչակազմի կողմից, և արդյունքները ներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ-ների առաջընթացի զեկույցում:

173. ՄԶՌ մոնիտորինգը կհամալրվի մանրամասն մոնիտորինգի համակարգով՝ առաջիկա 2018-2020 տարածքային զարգացման գործողությունների ծրագրում, և հետագա ՏԶԳԾ հրատարակություններում:

174. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում: ՄԶՌ-ների համար հայտնաբերվել են հետևյալ ռիսկերը, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղթում և կկիրառվեն ՄԶՌ գործընթացի իրականացման ժամանակ:

Աղյուսակ 28. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցում
Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն: Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր՝ տեղական մակարդակում հաջող իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու	Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում՝ կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝ տարածքային

ծրագրի նախաձեռնությունը, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզային վարչակազմերի համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:	և տեղական մակարդակներում:
Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզային վարչակազմի և այլ շահագրգիռ կողմերի միջև:	Դասընթաց մարզային վարչակազմի և ՏԶ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի բանիմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:
ՄԶՌ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/ կամ տարբեր իրականացման ընթացակարգեր և պարտականություններ:	Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ ՄԶՌ արդյունքների հրապարակման համար:
Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավվածության համար: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցը ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:	Ներգրավելով շահագրգիռ կողմերին ՄԶՌ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:
Անարդյունավետ մոնիտորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:	Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:
Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում («մեջտեղ բերել սեփական օրակարգը»):	Ընդհանուր շահերի նույնականացում (օրինակ՝ գործազրկություն, օդի աղտոտում, միգրացիա) շահագրգիռ կողմերի խրախուսում:
ՄԶՌ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն կապվել իրենց առօրյա կյանքին:	Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով ՄԶՌ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների կապված ՄԶՌ-ին կբարձրացնի իրազեկությունը և կխթանի դրական իմիջ:
ՄԶՌ-ն պետք է կարողանալ մատուցել, թե մարզային, և, թե տեղական մակարդակով: Հաջող ՄԶՌ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների համար:	Ներդնել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցում, որը համապատասխանում է իրենց տեղական կարիքներին:

175. ՄԶՌ-ի վերանայում*:* ՄԶՌ-ի մեծ միջնաժամկետ վերանայումը տեղի կունենա 2021թ. (2017-2020թթ համար), և եթե պայմանները պահանջում են ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի: Այս վերանայումը կիրականացվի մարզի վարչակազմի կողմից՝ սերտորեն կվերահսկվի տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից, որը կապահովի համապատասխան վերանայման մեթոդաբանություն և գործիքներ:

176. ***ՄԶՌ գնահատում:*** 2026թ.-ին ՄԶՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021թ. կլինի նաև ՄԶՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

1) **Արդյունավետություն՝** արդյունավետության վերլուծության համարվում է, թե որքա՞ն հաջող է ՄԶՌ-ին հասել իր նպատակներին: **Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝**

ա. որքանո՞վ են իրականացել նպատակները,
բ. որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները,
գ. որքանո՞վ են նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին,
դ. որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում,
ե. ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա,
զ. որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

2) **Արդյունավորություն՝** արդյունավորություն է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ են ծախսերը արդարացված,
բ. որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել,
գ. ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա,
դ. որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով,
ե. կան արդյո՞ք ծախսերի (կամ օգուտների) էական տարբերություններ մարզերի միջև:
զ. ո՞րն է պատճառը:

3) **Համընթացություն՝** համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին,
բ. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

4) **Համապատասխանություն՝** համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությանը, և միջամտությունների նպատակներին: **Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝**

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան,
բ. որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին,
գ. որքանո՞վ են նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին,
դ. որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակիչների համար:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

177. Ֆինանսական ռեսուրսներ: ՄԶՌ-ով նախատեսվող ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ պետական և մարզի համայնքների բյուջեների (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները: ՄԶՌ-ի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

178. Մարդկային ռեսուրսներ: ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում, կամ ինստիտուտների համակարգ, որը կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համագործակցությունը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

179. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանն ունի՝ 90 աշխատակից, որից 47.7%-ը կանայք են: Աշխատակիցներից 78-ը (86.6%-ը) ունեն բարձրագույն կրթություն: Մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներից 73-ը (81.1%) քաղաքացիական ծառայողներ են, որոնց համար պարբերաբար կազմակերպվում են մասնագիտական կարողությունների և ունակությունների զարգացման վերապատրաստումներ:

180. Մարզի համայնքապետարանները ունեն՝ 465 աշխատողներ, 184 համայնքային ծառայողներով, որոնցից՝ 116 (63%) ունի բարձրագույն կրթություն: Համայնքների ղեկավարներից 22-ը (50%) ունի բարձրագույն կրթություն, 19-ը միջին մասնագիտական և 3-ը միջնակարգ: Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացնելու և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների որակավորումը բարձրացնելու նպատակով իրականացվում են տարբեր վերապատրաստումներ:

181. ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ «Աջակցություն ՏԿՀՆ-ին, աջակցություն ՏՀ գործընթացներին» ծրագիրը մեծ ներդրում ունեցավ մարզի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության մասնագետների կարողությունների հզորացման գործում (2013-2017): Նախատեսվում է հետագա աջակցություն՝ ՄՀՌ-ի համակարգման, մոնիտորինիգի, հաշվետվության համար, հետագայում աջակցությունը կուղղվի կարողությունների ինտենսիվ զարգացմանը:

182. Տեխնիկական և կազմակերպչական հարցեր: ՄՀՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական ադապտացիա: ՄՀՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ: